

Հեղափոխական, Գրական, Հասարակական, Քննադատ. Քաղաքագիտական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

Քսանեվեցերորդ տարի ՀՈԿՏԵՄԲԵՐ № 10 1915—XXVI

Հասցէն՝ Тифлис, Редакція «ТАРАЗ» Tiflis (Caucase) Direction «TARAZ»

Խմբագրութիւնը յօդուածները կրճատում է, ընթերցում փոփոխութեան և չտպելիքը (երեխաբերից պահած) ետ վերադարձնում։

անձնական ընդունելութիւն խմբագրի հետ
ԵՐԵՔՇԱԲԹԻ և ՀՈՒԲԲԱԹ առ. ժ. 11—12։

Յայտարարութիւն *ընդունւում է ամեն լեզուով* **Տարազի** *յայտարարական տողը առաջին երեսը 40 կոպ., վերջի 25 կոպ. մանրատառ (պլոտիտ)։ Արտասահմանից կրկնակի։ Շատ անգամ կրկնողներն առանձին համաձայնութեամբ։*

Ադրբէյ-Տարազ *ամսական 33 կ.*

Տարազի ներկայ №-ը 1 ր.

ooOOOoo

Խմբագրութիւն—Թիֆլիս, *Գօլովինսկի պրօսպեկտ, տ. № 41 բաց է ամեն օր (բացի տօն և կիրակի օրերից) առ 10 և կէս ժ մինչև 2-ը կէսօրից յետոյ։*

Голов. пр., 41 *Տելեֆօն 16—90.*

Խմբագրութեան գրասենեակից

Այսու զգուշացնում ենք արտասահմանից (Եւրոպա-ից, Ամերիկայից, Ընդհատանից և այլն) մեզ պօստով պիտս դրամ չը փոխադրել, այլ ուղարկել դրամ ԱՆԳԼԻԱԿԱՆ *կամ* ՖՐԱՆՍԻԱԿԱՆ Credit Lyonnais *բանկա-ին չէկերով։ Պատճառը, որ անգլիական լիրային ռուսա-ան պօստը հազիւ վճարում է 9 ր.—38 կ. ֆրանսիա-ան ֆրանկին 38 կ., մինչդեռ բանկային չէկով անգ-ական մէկ լիրին Թիֆլիսի բանկերը վճարում են 13 ր. աւելի։*

Չէկը նամակի հետ պէտք է ուղարկել պօստով պատւիրած ծրարի մէջ։

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

X-րդ տարեշրջանի ամեռային սեզօնի **ՀԱՆԴԻՍԱՒՈՐ** *ԳԱՅՈՒՄԸ ուրբաթ հոկտ. 23-ին երեկ. 9 ժ. Այսու հրաւիրում են ճնորհ բերել արուեստի, գրականութեան ներկայացուցիչներ, հրապարակախօսներ, լրագրողներ իրանց ընտանիքներով* ԱՌԱՆՑ *խորութեան ազգութեան եւ քաղաքական հոսանքների ու Ադրբէյ Տարազի դաժանորդներից։*

ԿՈՂՄՆԱԿԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔԸ ՓԱԿ Է։

Մշտական այցելուները հրաւիրում են ճնորհ բերել իրանց սեզօնային տոմսերով։

Լոյս տեսաւ **Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ**

„ԱՂԷՏԻ ԵՒ ՏԱՌԱՊԱՆՔԻ ԱՇԽԱՐՀԻՑ"

(Այց թիւրքահայ փախստականներին)

78 եր. գինը 40 կ.

Ադրիւցիի յատկացում է Տ. Նազարեարի ճաշարանի օգտին

ուր գտնւում է և գրքերի պահեստը։

Դիմել նաև՝ Գուտենբերգ, Կենտրոնական և Դիր գրախանութներին, Իսկ Բագւում Сатурнин (Сегаль) և Посредник գրավաճառներին։

3—1

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆ ԵՒ Կ.Հ. Բ. ԸՆԿ. ԽՈՐՀՈՒՐԴԸ

յանձն առնելով Թիֆլիսում և գաւառներում մեծ քանակութեամբ գաղթականների համար վերմակներ, դոշակներ և տաք շորեր պատրաստելու, սրանով հրաւիրում են կար անող կանանց դիմել Թիֆլիսում նոր բացած կարի աշխատանոցները 1) Гановская ул. д. Манташева, *2)* Ольгинская, № 3, д. Мелик-Азаряна, *կար ստանալու համար։ Իսկ գաւառներում առաջարկւում է Ընկերութեան ճիւղերին անյապաղ կազմակերպել կարի աշխատանոցներ և դիմելով Ընկերութեան Խորհրդին, ստանալ նիւթեր կամ գրամ տեղումը գնելու։ Խնդրում ենք այն անձանց, որոնք ունեն կարի մեքենաներ, բարի լինեն ժամանակաւորապէս յանձնել յիշեալ աշխատանոցներին ձրիապէս կամ վարձով։*



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐՆԵՐ

Սփոփանք
Լաւկօնի արձան
† Գրիգոր Զօհրապ
† Սաթենիկ Օհանջանեան
Մոսկւայի հայկ. կոմիտէի սանիտարական խումբը.
. . . . . .
Պատերազմի տեսարաններից.
Բժ. եր. Մինասեան.
Թիֆ. դասաւորող հիւանդանոցի բժշկական և վարչական կազմը
Բուխարի էմիրի տաղաւարները.
Թիֆ. դասաւորող հիւանդանոցը.

ՆԻՒԹ

Հրաման Կովկասի Օգոստափառ Փոխարքայի.
Օգոստափառ Փոխարքայի գալուստը.
Հրատապ սփոփանք Մայր Հայաստանցիներին Տ. Նազարեան
Ուխտաւորի յուշերէս . . . . . *Հայկազուն*

ՄԱՀԳՈՅԺ-ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Գրիգոր Զօհրապ . . . . . *Հ. Աճեմեան*
Սաթենիկ Օհանջանեան . . . . . *Տ.*

Աչքերը . . . . . *Բ. Գրիգորեան*
Իմ բարեկամի զրոյցներից . . . . . *Դինօհ* [redacted]
Թերթեր իմ յիշողութիւններից . . . . . *Յ. Տէր-Գրիգորեան*

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Արցախի Մարգարիտը . . . . . *Բ. վ.*

ԱՌՈՂՋԱՊԱՀ

Թիֆլիսի դասաւորող հիւանդանոցը
Օգոստափառ Փոխարքան Թիֆլիսում.

ՆՈՐԱԳՈՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԻԵՍ

ՔՐՈՆԻԿՈՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՄԱՆ

Կովկասեան փոխարքայութեան վարչութեան վերաբերմամբ

(№ 1)

1915 թ. օգոստ. 23-ին կառավարիչ սենատին տուած հարցազրոյցին հրամանով ես նշանակուած եմ Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ, Կովկասեան բանակի Գլխաւոր Հրամանատար և կովկասեան կօզակային գնդերի ատաման։

Սոյն թուին մանելով Թիֆլիս, հրանդագում են ծառայական բոլոր գործերով դիմել ինձ։

Ողջունում եմ Կովկասի բոլոր ժողովուրդներին։

Ազօթում եմ Բարձրեալին, որ օրհնութիւն և օգնութիւն շնորհի ինձ՝ Բարձրագոյնս ինձ յանձնուած Կովկասի կառավարութեամբ ծառայելու Թագաւոր Կայսրին։

Երկրի բարեկեցութեան նկատմամբ իմ գործունէութեան հիմքը լինելու են՝ հաւատալ ղէպի բոլոր ժողովուրդների հաւատարիմ հպատակութիւնը ատ Թագաւոր Կայսրը. նրանց սէրը ղէպի Ռուսաստանը, որի հետ միասին Կովկասը կազմում է անբաժան ամբողջութիւն։

Ոգևորուած հաւատարմութեամբ ծառայելու Թագաւորին, անսահման սիրով ղէպի Ռուսաստանը և ջերմ ցանկութեամբ ոյժերիս չափ օգուտ բերելու, ձեռնարկում եմ իմ աշխատանքներին, յոյս ունենալով որ կը գայ ժամը, երբ, ոյժ առած երկրի վերատնութեամբ և յենելով քաջարի Կովկասի բոլոր ցեղերի ջերմ ցանկութեան վրայ՝ համերաշխ աշխատելու ընդհանուրի օգտին։ Ես նրանց հետ միասին պէտք է ուրախանամ երկրի հոդևոր և մտաւոր աշողութիւններով, նրա բնական անթիւ հարստութիւնների զարգացումով ու ծաղկեցումով և ընդհանուր բարեկեցութեամբ։

Գեներալ-ադիւտանտ ՆԻԿՈԼԱՅ

Թիֆլիս, 23 սեպտ. 1915 թ.

ՓՈԽԱՐՔՈՒԹԻՒՆ ԳԱԼՈՒՍՏԸ

Չորեքշաբթի սեպտեմբերի 23-ին, ցերեկուայ ժամը 11-ին Թիֆլիս ժամանեց Կովկասի նոր Փոխարքայ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաևիչ իր ամուսնու՝ Մեծ Իշխանուհի Անաստասիա Նիկոլայեվնայի և իր եղբայր Մեծ Իշխան Պետր Նիկոլայեվիչի հետ։

Դեռ վաղ առաւօտեան ամբողջ քաղաքը զարդարուած է դրօշակներով, գորգերով, ծաղիկներով։ Մի քանի տեղ յաղթական կամարներ են կառուցուած։ Վոկզալից մինչև Փոխարքայի պալատը շարուած է զօրքը և քաղաքի բոլոր կըրթական հաստատութիւնների սաներն ու սանուհիները։

Երկաթուղու կայարանում

Ժամը 11-ին վոկզալի յատուկ պատրաստած շքեղ ծաղկաղարդ դահլիճը են հաւաքւել բոլոր բարձրաստիճան զինուորական պաշտօնեաները, Թիֆլիսի և Քութայիսի նահանգական ազնուականութիւնների պարագլուխները, Թիֆլիսի քաղաքագլուխը, սրա օգնականը և ուպրավայի անդամներից Մ. Աթաբէկեանը, վաճառականների, մեչչանների, արհեստաւորների աւագները։ Սրանցից դուրս ուրիշ ոչոքի թոյլատրուած չէ ներկայ լինել, բացի մամուլի ներկայացուցիչներից մի քանիսին, որոնց թիւում հայկական մամուլից միայն Մշակի և Տարազի խմբագիրներին։

Ձիշտ ժամը 11 և կէսին փոխարքայական յատուկ կառախումբը հասաւ վոկզալ, և առաջինը Փոխարքայի կուպէն մտաւ գեներալ Իւդենիչը պատաւոր զեկուցումն ներկայացնելու, ապա ներկայացաւ Փոխարքայի օգնական Պետերսոնը։ Երբ Փոխարքան դուրս եկաւ վագոնից, զօրքը ողջունեց զինուորական սալիւտով և երաժշտութիւնը նուագեց։ Փոխարքան անցաւ ամբողջ զօրքի առջևից, ընդունեց սալիւտները և ապա մտաւ արքայական դահլիճը Մեծ Իշխանուհիների հետ, որոնց մուտքում մատուցեցին դեղեցիկ ծաղկեփնջեր։ Այստեղ հոֆմէյստեր Պետերսոնը ներկայացրեց Նորին Կայսերական Բարձրութեանը բարձրաստիճան պաշտօնեաներին, որոնց ամենքին ձեռք էր տալիս։ Թիֆլիսի ազնուականութեան պարագլուխը ողջունեց մի համառօտ ճառով վրաց ազնուականութեան կողմից, որին Փոխարքան պատասխանեց՝ «Շնորհակալ եմ ողջոյնի համար»։ Ապա ողջունեց հետևեալ ճառով Թիֆլիսի քաղաքագլուխը, մատուցանելով աղ ու հաց։

«Ձերդ Կայսերական Բարձրութիւն.

Հին Թիֆլիս քաղաքի ազգաբնակութիւնը և Թիֆլիսի քաղ. ինքնավարութիւնը ուրախագին ողջունում են Ձերդ Կայսերական Բարձրութեան բարեյաջող գալուստը։

Մեր քաղաքի ազգաբնակութիւնը, զգալով իրան հարազատ որդիները մեծ և անբաժան Ռուսաստանի, մի հոգով և մտքով, անսասան կերպով նուիրուած իր Թագաւորին, գլուխ է խոնարհում Արքայական Փոխարքային և խնդրում Երկրորդ Հայրենական պատերազմի Փառաւոր Հերոսին հաւատալ իր հաւատարմութեան ջերմ զգացմունքին։

Ձերդ Կայսերական Բարձրութեանը, իբրև քաղաքի ներկայացուցիչ, խոնարհաբար խընդրում եմ ազգաբնակութեան կողմից ընդունել ջերմ ողջոյն ըղխած ի խորոց սրտի, և մեր Կովկասեան աղ ու հացը։

Բարի գալուստ»։

Փոխարքան պատասխանեց՝ «Շնորհակալ եմ ձեր ողջոյնի եւ աղ ու հացի համար»։

Շքերթը

Վոկզալից դուրս գալով Մեծ Իշխանը, նստելով ապիսակնժոյգը հանդիսաւոր դիմեց քաղաք, հետևող ուրիշ նստարանով գործակալների վրայ իր շքախմբին։ Մեծ Իշխանուհիները գնում էին աւտոմոբիլով։ Հանդիսաւոր գընացքը հասաւ անհամար և խուռն ժողովրդի երկարատև կեցցէների ընդմիջմամբ և երաժշտական խմբի նուագածութեամբ մինչև Սիօնի տաճարը, ուր Վրաստանի էկզարխ արքեպիսկոպոս Պիտիրիմը ամբողջ օրհնողաս հոգևորականութեան հետ ընդունեց և օրհնեց ու ողջոյնի ճառ արտասանեց։

Սիօնի տաճարից Մեծ Իշխանը և Իշխանուհին նոյն հանդիսաւորութեամբ դիմեցին Վանքի հայոց մայր եկեղեցին։

Վանքի տաճարում

Դեռ վաղ առաւօտից Վանքի եկեղեցու բակում տեղեր էին գրաւել Ներսիսեան, Գայիանեան, Յովնանեան և Թիֆլիսի բոլոր հայ ծխական դպրոցների աշակերտ-աշակերտուհիները իւրաքանչիւր կրթական հաստատութիւն իր հոգաբարձական և ուսուցչական կազմերի գլխաւորութեամբ։

Հեռվհետէ եկան առաջնորդի հրաւիրատոմսով հայ մամուլի, ազգային բարեգործական, կուլտուրական հաստատութիւնների և ընկերութիւնների ներկայացուցիչներն և ծխականներ, որոնք բոլորը մտան եկեղեցի։

Եկեղեցու բակը և մուտքը, ինչպէս նաև առաջնորդարանը զարդարուած էին դրօշակներով։ Եկեղեցում յատակին ձգած էին գորգեր և կարմիր մահուդ։

Եկեղեցու շուրջը, մեքսաւոր փոդոցներում կանգնած էր անհամար բազմութիւն։ Ամենուրէք տիրում էր լիակատար կարգ ու կանոն։

Որոշած ժամին եկեղեցում տեղ գրաւեց հայ հոգևորականութիւնը զգեստաւորած, գլուխ ունենալով թեմակալ առաջնորդին, զգեստաւորած և թագով։

Ուղիղ ժամը 12 և 40 րոպէին Փոխարքայ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչը գեղեցիկ նժոյգ հնձած, իր շքախմբի ուղեկցութեամբ բարեհաճեց այցելել Վանքի եկեղեցին։ Եկեղեցու դանգակների զողանջիւնը, հասարակութեան ողջոյնի բացագանչութիւնները, դպրոցականների «ուրա» աղաղակները, ձեռքներին բռնած փոքրիկ դրօշակները ծածանելով, ազդարարեցին Մեծ Իշխանի և նրա Օգոստափառ ամուսին Անաստասիա Նիկոլաևնայի գալուստը։

Մեծ Իշխանը իջաւ ձիուց եկեղեցու դարպասի մօտ և ոտով իջնելով բակը՝ շրջապատած իր շքախմբով մտաւ եկեղեցի, որի մուտքի առաջ դիմաւորեց սրբազան առաջնորդը մեծ խաչը ձեռքին։ Մեծ Իշխանի համբուրելուց յետոյ, սրբազանը առաջնորդեց Բարձր հիւրերին և նրանց հետ եկած պաշտօնական անձանց դէպի ս. սեղանը։ Ապա Մեսրոպ սրբազանը կատարեց հակիրճ մաղթանք, արևշատութիւն մաղթելով կայսրին և կայսրուհուն, կայսերական Գերդաստանին, և Կովկասի Փոխարքայ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին և նրա ամուսնուն։

Մաղթանքից յետոյ Մեսրոպ սրբազանը դիմեց Մեծ Իշխանին հետևեալ ճառով.

Ձերդ Կայսերական Բարձրութիւն Ամենատոդորմած Փոխարքայ։

Հայ եկեղեցին, մինը Արևելքի ամենահինաւուրց եկեղեցիներից, իր կամարների տակ ջերմագին ողջունում է իր Փոխարքային, Մեծ Իշխանին, այն Թագաւորների ընտանիքի անդամին, որոնք վերցնելով իրանց բարձր հովանաւորութեան ներքոյ ազգերի ընելքում ապրող քրիստոնեայ ժողովուրդների եկեղեցին՝ [illegible] խաւեցին ազատել թէ եկեղեցին և թէ ժողովուրդները նրա վրայի բռնակալ լծից։ Այդ ազատագրումը միևնոյն ժամանակ լոյսի և խաւարի, Արևմուտքի Արևելքի կուլտուրայի կռիւ [illegible]

Հայ ժողովուրդը ապրում այն յոյսով, թէ այդ մեծ [illegible] քական երթը շարունակուում այսուհետև ևս և ազատութիւն կը բերէ նաև ուրիշ երկրների բնակուող իր եղբայրներին։ Յոյսը վոխուում է լիակատար հաւատի Ձերդ Կայսերական Բարձրութեանը Կովկասի Փոխարքայ և կովկասեան պանծալի զօրքերի զեկավար նշանակութեան ներկայ սարսափելի պատերազմի սկզբից հայերը, ունկն դնելով իրանց սրտի բռնկման, տեսիլով իրանց նախնիքների սրտադիցիաներին և առ ընդհանուր հայրենիքը տածած սիրուն, յօժարակամ հանդէս եկան, վճռելով հայրենիքի սեղանին մատուցել իրանց կեանքը։ Ցնծագին ընդունելով Ձերդ Կայսերական Բարձրութեան, ամբարտաւնուած զէպի [illegible] կասեան զօրքի լիակատար [illegible] թութիւնը ունեցած հաւատացած զօրքի, որի զեկավարն էք դուք Դուք, մենք նորից կրկնենք մեր խորին վճռակամութիւնը տալու ամեն տեսակ հաբերութիւն Ռուսաստանի ուժութեան ու փառքի համար։

Եւ այս նշանաւոր ժամին, Ձերդ Կայսերական Բարձրութիւնն ստանձնում է երկրի [illegible] ռավարութիւնը, ես իմ [illegible] հետ միասին աղօթքներ եմ բառաքում առ Ամենաբարձրեալը, որպէսզի նա Ձեզ ոյժ ու [illegible] ողջութիւն պարգևէ և Ձեր [illegible] մատուն կատարելութեան [illegible] բարգաւաճի Կովկասը և [illegible] նանայ ստանալ այն բարիքները, որ վայելում է մեր ընդ[illegible] ձակ հայրենիքը։

Ազօթում եմ նաև Ձերդ [illegible] նեսիրտ ամուսնու Մեծ Իշխանուհի Անաստասիա Նիկոլայեվնայի առողջութեան համար, նայի առողջութեան համար [illegible] կը բաժանէ Ձերդ Կայսերական Բարձրութեան հոգատարութիւնը առ ի բարեկեցութիւն կասի և նրանում բնակուող [illegible] ժողովուրդների։

Թող Տէրը երկար անէ [illegible] Կայսերական Բարձրութիւն [illegible] կեանքը»։

Սրբազանը իր ճառից [illegible] պահանջիչով օրհնեց Մեծ Իշխանին և Մեծ Իշխանուհուն, [illegible] համբուրելից սրբազանի [illegible] ս. Խաչը և սրբազանի աջը։

Դրանից յետոյ Մեծ Իշխան իր ամուսնու և շքախմբի [illegible] դուրս եկաւ եկեղեցուց։

ԹՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
Տիգրան Նազարեան

REDAGTEUR EN GNEF ET DIRECTEUR
Tigran Nazarian

ԹԻՓԼԻՍ № 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ XXVI—1915 Tiflis

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԱՑԻՆԵՐԻՆ

Գրական-Գեղագիտական Սալօնի հայ փախստականների ցերեկւայ ապաստարանը Թևակոխեց իր գոյութեան երրորդ ամիսը։ Եւ այս ժամանակամիջոցում, մինչդեռ Թիֆլիսում տարածւած էր բծաւոր տիֆն ու խօլերը, մեր այս ապաստարանում չեղաւ ոչ մի դէպք մահւան կամ հիւանդութեան։

Ապաստարանի նպատակն էր սոսկ անունդ մատակարարել Մայր Հայաստանի մեզ մօտ ընկած բեկորներին, որոնցից նոյն իսկ Թիֆլիսում սովամահ էին եղել հայ եկեղեցու բակերում։ Սակայն անդի հետ անասահման մաքրութեան անհրաժեշտութիւնը գիտակցելով, մենք գործադրեցինք մեր բոլոր ոյժերը մինչև օրս էլ մատակարարելով ապաստարանում եղողներին այն ամենը, ինչ պահանջւում էր սրանց հոգեկան և ֆիզիկական խաղաղութեան ու անդորրութեան համար։ Թիֆլիսի ամենաստուերախիտ, պօչէմկի ընդարձակ այգում հայ փախստականները՝ մեծ և փոքր, տղայ և աղջիկ տարւայ ամենատօթ օրերին աննկատ։ Ջրի փոխարէն առաւօտից մինչև երեկոյ սրանց տրամադրութեան տակն էր Թէյը, որ կարող էին խմել, որքան կամենան։ Հակառակ բժիշկների, այլ խորհրդատուների և հէնց իրանց ապաստանւածների, մենք չը պատրաստեցինք սրանց համար ոչ չորեքշաբթի-ուրբաթ և ոչ շաբթապասներին պահուց կերակուր։ Բացառութիւն արինք սոսկ երկու օր՝ մի-մի երկուշաբթի Աստւածածնի և Վարագայ ս. Խաչի շաբթապասներին, տալով պահուց կերակուր և սրանց նաւակատիկներին կաթնեղպաս իւղով, ինչպէս պատրաստում են Հայաստանում։ Մնացած բոլոր օրերը տրւել են մսապուր, միս և առաւօտ երեկոյ Թէյ հացով։ Ներկայ հոկտեմբերի մէկից առաւօտեան Թէյը հացով տրւում է 9—11 ժ., ճաշը 2½-ից մինչև 3½ ժ. և երեկոյեան Թէյը 4—5 ժ.։ Շաքար (սղոցած) իւրաքանչիւր հոգուն տրւում է այժմս օրական 4 կտոր։ Հնարաւորութեան սահմաններում կարւել են ճերմակեղէն Թէ տղամարդկանց և Թէ կանանց համար։ Տրւել են հագուստեղէն, անկողնի պարագաներ, կօշիկներ Թէ նոր և Թէ նւէրներ ստացւած։

Հրաստապ սփոփանք Մայր Հայաստանցիներին
Յատկապէս Տարազի համար նկարեց
Մխ. Խուճուճց

Բացել ենք լուսանկարչական և թիլ մանելու, գուլպա գործելու արհեստանոցներ, սակայն սրանք չը բարգաւաճեցին։ Բացւած Վաստպուրական դպրոցը ապաստարանի երկսեռ երեխաների համար, որոնց ուսուցանում էին հէնց սրանց հետ փախած ուսուցիչները, հաղիւ մի ամիս գոյութիւն ունեցաւ։ Պատճառը՝ Ուսուցչ. Միութիւնը կամեցաւ, որ այդ դպրոցի ղեկն ու ուսուցիչներն էլ իրանց դրօշակի տակ մտնեն և մենք հաճոյքով նրանց ցանկութիւնը կատարեցինք։

Գրական-Գեղագիտական Սալօնի Հայաստանի բեկորների ապաստարանը Վաստպուրական իր դպրոցի բոլոր աշակերտ - աշակերտուհիներին ձրիապէս տւել էր դպրոցական պիտոյքներ և դասագրքեր՝ Մայրենի լեզու Ղ. Աղայեանցի և Աբրաքեանի։ Գնել էինք դասարանական պիտոյքներ, նոյնիսկ ժամացոյցներ և զանդակ։

Բժշկական ընդարձակ աշակցութիւն են արել Գրակ.-Գեղագիտական Սալօնի ապաստարանին բժշկապետ Բ. Նաւասարդեանի, Պաղաք., Արամեանցի և Զուբալովի հիւանդանոցները, բժշկ. Ե. Գէորգ-Բէկեանի ակնաբուժարանը հայլն, հայլն։ Օպերասիօնի կարիք ունեցող, (քրոնիկական հիւանդութիւնները) թուլակազմեր, ջղային, ականջի, աչքի, քթի և

նման հիւանդութիւններ ունեցողներին հնարաւորութիւն է տւել ապաստարանը բժշկւելու։

Կատարւել են եկեղեցական հանդէսներ՝ խաղողի օրհնութիւնը, հոգեհանգիստ հայ մարտիկ նահատակների և ապաստանւածների հանդուցեալ ազգականների յիշատակին, Վարագայ տօնը։ Այս հանդէսներին ներկայ է եղել հոգևորականութեան ստւար թիւ և հոծ երկսեռ բազմութիւն։ Պատշաճ օրերին խօսացել են՝ հ. Բենիկ վարդապետ. հ. Աթանասեան ս. քահանայ, տէր Սահակ Սահակեան և տէր Յարութիւն Ճուղուրեան քահանաները, պրոֆէսօր Մինասեան և ուրիշները։

Օգոստափառ Կովկասի Փոխարքայ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի դալստեան առիթով փախստականները հրաւիրւել են սինեմատօգրաֆիական ներկայացման։ Վեհափառ Կաթողիկոսի անւանակոչութեան կատարւել է դպրոցական հանդէս և աշակերտներին բաժանւել զգեստներ։

Ամեն կիրակի մատաղ է արւել և ճաշի սկզբին բաժանւել ապաստանւածներին։

Փախստականներից մի քանի հարիւր հոգու համար մեր ապաստարանը աշխատանք է գտել շատ բաւարար պայմաններով։

Բոլոր պաշտօնեաները ապաստարանում փախստականները են բացառապէս, որոնք ստանում են որոշ ամսական։

Գրական-Գեղագիտական Սալօնի այս ապաստարանին կից, հէնց առաջին օրւանից, բացւած է տեղեկատու բիւրօ, որը մատակարարում է ցանկացողներին ամեն տեսակ բանւոր։

Կառուցւում է այժմ այգու մէջ աղիւսաշէն ընդարձակ սրահ ձմեռային ճաշարան-թէյարանի համար, որի մէջ ամփոփւելու է և խոհանոցն ու թոնիրը։

Զը նայած նրան, որ մենք բացի Մշակ և Հոլրիզոն օրագրներում և Աղբիւրի ու Տարազի նախորդ №№ տպագրւած յայտարարութիւններից ոչօքի ոչ մի կոչ, ոչ մի դիմում չենք արել մինչև օրս էլ ոչ գրաւոր, ոչ բերանացի, այնու ամենայնիւ սկսւել է և շարունակւում է ստացւել ամեն կողմից սրտաբուխ նւէրներ թէ դրամով, թէ մթերքով և զգեստով։

Հասարակական հիմնարկութիւններից ստացւած են մինչև այժմ նւէր 1) Քաղաքների Միութիւնից երկու (2) գրւանքա բաթումի չայ, Թիֆ. փախստ. օգնող պ. նախագահի միջոցով, 2) Թիֆ. Հայ Վաճառակ. պատերազմից ձլատւած տաճկահայերին օգնող Կոմիտէից 500 ր.։ 3) Թիֆ. Առևտր. բանկի ծառայողներից մի արկղ (5 պուդ) շաքար, 4) Թիֆլ. Էղիլխանեան ընկ. կաշեգործարանի մի խումբ ծառայողներից ութ (8) զոյգ մեծ և մանր կոշիկ։ Մշակի խմբագրութեան միջոցով զանազան տեղերից (օգոստ. 12-ից մինչև հոկտ. 2-ը) 1269 ր. 65 կ., Հորիզոնի խմբագրութեան միջոցով վաճառւած պատկերների վճար 21 ր.։ Тифлискій Листок լրագրի միջոցով 160 րուբլի։ Սակայն ստացւել են և շարունակ ստացւում են հարիւրներով և աւելի փոքր գումարներով հայութեան բոլոր խաւերի անհատներից սըրտաբուխ շատ գումարներ, որոնց գործադրիլը հնարաւորութիւն է տալիս սփոփանք լինել ցուցակագրւած մօտ 1000 հոգուց իւրաքանչիւր օր մի քանի հարիւր հոգու սնունդ մատակարարելով ապաստարանում և թէ ապաստարանից դուրս։ Մանրամասն հաշիւը եղև մտքի կը տպագրւի հոյակապ պատկերազարդ Ծուշարձան Հրատապ Սփոփանք Մայր Հայաստանցիներին հրատարակութեան մէջ, որ երկարերկար տարիներ կարտայայտէ հրախտագիտական զգայմունք կարեկից նւիրատուներին, ասելով, թէ ինչպէս իրանք սև ու կապոյտ օրերին սփոփանք եղան իրանց թշւառ եղբայրակիցներին և մահւան ճիրաններից ազատեցին։

ՈՒԽՏԱՒՈՐԻ ՅՈՒՇԵՐԷՍ

ՎԱՐԴԱՎԱՃ ՎԱՆՔԸ

Հոն, ուր Վանի ծծղկտուն ծովակը կը ծըփծըփայ իր ալեակներով երփներանգ, հոն ուր կը բարձրանայ Սիփանն ալեհեր ու ձիւնածածկ, հոն, ուր Հայաստանի ոգին կը սաւառնի կարմիր հորիզոններու վրայ, հոն, Վասպուրականի սիրտ Վանի, Վարագայ լերանց մշտածիծաղ հովտի մէջ, աւերակ ու անբնակ, այրւած ու քանդւած, խաչագուրկ կաթուղիկէներով, արիւնաներկ կանաչներով զարդարւած, դարաւոր ընկուզենիներու և մշտալար ուռիներու հովանիներու ներքև, առատահոս ջրերու և գլգլուն աղբիւրներու ջրաձայներով հանգիստ ու խաղաղ կը նիրհէ Արծրունեաց դարաւոր մհնաստանը, Վարագայ Եօթն Խորան, Արծւաբոյն սրբավայր վանքը։

* * *

—Ուխտի երթանք, ուխտաւոր ընկեր, առնենք գինին ու խորոված երթանք Վարագայ վանքը, կատարենք ուխտերնիս։

Օխէ՛ր... զով քամին կը փչէ զըզըզալէն։ Դէհ, ելէք Վարագայ Գեալիե*) երթանք։

*) Հովիտ մըն է սա մշտահոս աղբիւրներով և բնական ամենասքանչելի տեսարաններով զարդարւած։

Վանքէն կելլենք ու Գեալին հասնելով Ապարանջան աղբիւրի գլուխը կը նստինք։

Ապարանջան աղբի՛ւր... Ջուր մի՛ ըսէք սա ջրին. մարգարիտներու փայլուն ու շողշողուն հատիկներու կը նմանին անոր կաթիլներն վճիտ ու պաղորակ։

Կէս օր է. Ապարանջան աղբիւրի գլխին նստած կը վայելենք պաղ գինին ու դառան խորոված։ Տիւֆն ու փողը կը չալին ներդաշնակ։ Պարողները հաւաքւելով բոլորուեցան, պարն սկսաւ, պարերգը շատ հաճելի էր։

«Վերին Վարագ աճուը տեղեր
«Տիճեյ, տիճեյ, տիճսաճ,
«Ուր չորս բուլոր հայու գեղեր
«Տիճեյ, տիճեյ Հայաստաճ...

Ուրախութեան աղաղակներով կը թնդար ու կարձանագրէր Վարագայ Գեալին։ Այս երջանկաւէտ ու դրախտավար հովտին մէջ քանի մը ժամ զւարճանալ է յիտոյ պտոյտի ելանք Վարագայ սարը։ Քաղեցինք ծաղկունք զանազան, կապեցինք փունջեր

գոյնզգոյն, երգելով, զարճանալով վերջացուցինք պտոյտնիս ու վանքը դարձանք։

Արևը իր վերջին համբոյրը կուտար Վարագայ սարի արծուաբոյն կատարներուն։ Իր վերջին շողերով կը պսպղացնէր Վարագայ մենաստանի խաչն ու գմբէթը և հանդարտ ու հեզիկ անցնելով արևմուտք, պահիկ մը լողաց աստուածաբնակ ծովակի մէջ, ապա դուրս ելլելով քրտնած, կամաց կամաց անհետացաւ Սիփանի բարձրաբերձ գագաթներու հետև։

—Է՛յ ուխտաւորներ, եկէք Կարկուս խաչը երթանք և դիտենք մայրամուտը մեր մայրենի արեւուն։

Ո՛վ արևդ իմ սրբազան հայրենեաց, կենսատու պարգև արար աշխարհի, կաց պահիկ մ՛ալ մինչև ուխտաւորներս ճամբայ ելնինք Վարագէն քաղաքը երթալու։ Մեր հայրենի արևնէ ան կը սիրէ ու կը լսէ մեզ։

Վանքին բակը լեցուեցաւ ուխտաւորներու խուռներամ բազմութեամբ։

Զրրը՜նգ զրրը՜նգ կը զօդանջեն մենաստանի զրրընգուն զանգակները։

Զրրը՜նգ, զրրը՜նգ կարձագանգեն Վարագայ արծաբնակ լերանց ղեթանները։

Հեռու լեռներու և հովիտներու մէջ պտոյտի գացող ուխտաւորները լսելով զանգակներու զօդանջիւնը, կաճապարեն բոլէ մը առաջ վանքը հասնել։

Մեկնելու ժամը կը հասնի։ Վանքին բակը ուխտաւորներու բազմութիւնը կազմ ու պատրաստ մեկնելու կը սպասէ։

Նաղարան-զուռնան կը չալեն թեթև ու հաճոյալի պարերգներ, հարիւրաւոր ուխտաւորները պար կը բռնեն վանքի բակի մէջ, ուր ժամ մըն ալ զարճանալէ յետոյ դժւարութեամբ կը մեկնենք դէպի Վարագէն։

Ուխտաւորներուս կարաւանը շարժւեցաւ։ Նաղարան-զուռնան խումբին առջևէն պարողները կարգ-կարգ հետևէն, կնիկ ու մարդ, ձիժ-ուիժ խառն ի խուռն ուրախ զարթ աղաղակներով կը քալենք։

—Է՛յ, նստէք հանգ առնենք, Զուիկ աղբիւրը հասանք, կաղաղակէ Դեօնպաշին (պարագլուխը)։

Նստեցանք. Զուիկ աղբիւրի չուան ջրէն կուշակուշա խմեցինք, զովացուցինք մեր մրկած սրտերը։

Արևը վաղուց պահւըտեր էր Սիփանի հետ երբեմն իր գլուխը գաղտուկ դուրս կը հանէր, լեռան ճեղքւածներէն դեղնուկ շող մը կը ձգէր ծովուն վրա և ապա կանհետանար։

Տըրըմբ, տըրըմբ ձայնեց նաղարան, ոտքի ելանք և նոյն ուրախ զարթ տրամադրութեամբ շարունակեցինք ճամբանիս։

Ծովազարդ արևմուտքէն կը փչէր անուշ հովիկ, շոյելով մեր քրտնած դէմքերն ու յոգնած մարմինները։

Լուսինը հեզիկ-հեզիկ, քնքուշ դէմքով, արևելեան թագուհիի մը նման ծանր-ծանր դուրս եկաւ Վարագայ սարի հետևէն։

Օ՜հ, հայրենի տեսարան ու դիտարան աննման։ Դարձեալ ծըփծըփուն ծովակն է որ իր հմայիչ պատկերով, կը հմայէ ու դիւթէ մեզ։ Լուսնոյ շողերը վէտ-վէտալով կողջագուրւեին ալեակներու հետ։

Մինչ ես հայրենեացս դիւթիչ տեսարաններով գրաւած կը խորհրդածեմ, միւռան ու բարձրակոչ աղաղակները ուխտաւոր բազմութեան կը սթափեցնեն զիս։

—Հասանք, հասանք։

Քաղաքին մօտեցեր էինք։

Յոգնած և ուժասպառ բայց ուրախ զարթ տուները գացի։

—Բարի իրիկուն Նանա ջան, ըսի լուսահոգի մօրս, որ փողոցի դռան նստած ինձ կը սպասէր։

— Աստծու բարին, բարին Աստծուց գտնես ձագիկ։ Ուխտդ ու դիլաէդ *) ընդունելի էլնի որդի։ Դէ սաա տեսնենք դմո գնացիր, դմո էկար։

—Շատ նեղացեր եմ մէրիկ, ըսկուն**) որ հիչ***) հաւաս չունեմ խաբար տամ։ Վաղ ամէն բան կը պատմեմ քեզ։

Անմիջապէս պառկեցայ մէջ մեր բակին, կապտագեղ ու աստղազարդ երկնքի տակ և ուխտաւորիս քաղցր ու անջինջ յուշերով ու յիշատակներով երազուն քնացայ մուշ մուշ...

* * *

Տարիներ անցան այն օրէն յիշատակներու, ուրախութեանց անդարձ տարիներ։ Ամէն տարի կըրկնւեցան մեր ուխտագնացութիւնները և միշտ ալ մինոյն խրախճանութիւններն և ուրախութիւնները տեղի ունեցան։

* * *

1915 արիւնոտ թւականի մայիսին էր։ Անցաւ մեր երկրէն արիւնի ու կրակի, աւերումի ու զուլումի դժոխային տարի մը։

Վանի Ալբիւլեան հերոսամարտէն յետոյ, երբ անձրևոտ մայիսը եկաւ օրմը Վարագայ վանքը ուխտի գացի։

Եղէւկ աչքերուս...

Ալ չեմ տեսներ մենաստանի ծառախիտ պտտառի վրայ նայող ուխտաւորաց սենեակներու երկար շարքը, անոնց տեղը մոխրակոյտները կը բարձրանան ողբալիօրէն։

Ահազդեցիկ ամայութիւն մը կը տիրէ ամենուրեք։ Կեանքը մեռած է այս երբեմնի կենսատու վանքին մէջ։ Տաճարը կը մտնեմ. թշնամու աւերիչ ձեռքերու հետքերը կը տեսնեմ ամեն կողմ։ Նախնեաց գերեզմանները քանդած և նշխարները դուրս հանած են, խաչն ու խաչկալը, գիրն ու յիշատակարանը, բոլորը այրած ջնջած ու քանդած են։

Ուխտաւորիս կարօտի ջերմ համբոյրը կուտամ սրբապղծած տաճարի վէմ քարին ու դուրս գալով տաճարէն նոյն ջերմ համբոյրներս կը զրօշմեմ վարագայ քարին, հողին, ջրին, ծաղկին, կար-կանաչին, ծառ ու ծիլին, և քաշւելով դարաւոր ընկուզենիի մը հովանու տակ կը հանդչիմ և իրաւամբ ու բնազդումով մը ազգային երգի սա տողերը կը մրմնջեմ.

«Ողջո՜յն տէր աւերակաց
«Կիսակործան տաճարներուն...

Ողջոյն քեզ, արծաւարոյն Վարագ։ Ո՞ւր է սրաթռիչ Արծիւդ...

Մայիսն է, ու անցեալ տարիներու նման ուխտաւորներու կարաւաններ չը կան։

Գեալին կերթամ մինակ վազող ջուրերու արտասուվոր խշշոցէն և շրջապատի պայութենկէն կը սարսռամ. դող մը կանցնի մարմնոյս վրայէն։ Կը յա-

*) Ինդիրք, **) այնպէս, ***) երբէք։

ռաջանամ։ Փթթեր են սարի կանաչներն ու ծաղիկները երփներանգ, որոնց վրայ ձգւած են յօշոտւած, մորթազերծ, ուռած և այլանդակւած գարշահոտ հայ դիակներ։

Վարագայ վանքի երբեմնի ուխտաւորներն էին, անոնք, որ ընկած են հոս անպատան ու անտապան աւազ...։

Սարսափահար ու սրտաբեկ, վանքը կը վերադառնամ։

Զանցած ժամ մը և ահա հեռուէն, սարալանջերու կանաչազարդ ճամբաներէն զինւորներու խումբ մը, դանդաղ քայլւածքով ու երգելով դէպ ամայի մենաստանը կը յառաջանար։

Քարի մը գլուխ կայնած սրտատրոփ կը սպասեմ զինւորներու ժամանման։

Կէս ժամ յետոյ խումբ վանք հասաւ։

Անդրանիկի կամաւորական խումբն էր։

Հովասուն ծառերու ստուերներու տակ կը հանդստանան մեր հերոս ու չարքաշ զինւորները, որոնք քիչ մը յետոյ խումբ խումբ պտոյտի կելնեն վանքի աւերակների վրայ։

Բոլորի սրտէն ախ մը կը թռի ու կանհետի աւերակներու մէջ...

* * *

Իրիկուն էր, զինւորները ճաշելէ յետոյ հոս ու հոն պտոյտի կելնեն, բոլորն ալ տխուր են, արդար վրէժի պոռթկումով մը լեցւած է բոլորի սրտերը և դէմքերնուն վրայ կը նկատւին զայրոյցի երեւոյթներ։

Ցոգնած ու սրտաբեկ կը պառկիմ անտառի դարաւոր մէկ ուռենիին տակ քնանալու։

* * *

Ցիշատակալից երազը...

«Այրւած ու ամայացած վանքի աւերակներու վրայ, Վան-Գուժը երգելով կը ճախրէ Վասպուրականի ծերունազարդ Արծիւը...

«Քարէ քար, տաճարէ տաճար կանցնի և խաչազուրկ կաթուղիկէի ծայրին կը նստի, կը շարունակէ իր ողբերգը, և ապա կը թըռի, կանհետի... ուր, Աբարատեան դաշտը գնաց արդեօք...

«Ահա նախկին վարագը. եռ ու դեռ, կեանք, կենդանութիւն կայ։ Միաբանները ծառերու հովանիներու տակ նստած են. ուխտաւորներու հոծ բազմութիւն մը կը վխտայ վանքի ամէն կողմ։ Հովիւ ոչխարաց հօտ սարը կը տանէ իւր սրինգը նւագելով, կանաչ դաշտերու մէջէն կը լսւի ուրախ աղաղակները երջանիկ հնձւորներուն։ Մառնատունէն, տնտեսատունէն կը բարձրանայ շէն վանքի ծուխն ու մուխը։

«Մայիսեան առաւօտ է, մէջ լուս մէջ մութ, արդէն շատ առաջ սկսած է կեանքը վանքի կամարնեբու տակն ու շրջապատը։

«Ուխտաւորներս Գեալին կերթանք, կօտ քարի*) հովանու տակ կը նստենք պաղորակ ջուրի մէջ, պաղելու կը դնենք կարմիր գինին, խորոված ը ղրժժալէն կեփի, նւագածուները կը նւագեն. պարը բռնուած է...»։

Ու մինչ ես ուխտաւորիս սա անուշ յուշ-յիշատակները կը հաւաքեմ մէջ քուն մէջ կրազ, հոն հեռուն, վանքի աւերակներու վրայ նստած հայ զինւորները յուզիչ ու մելամաղձիկ եղանակով մը կերգեն.

«Մոխիրներու վրայ ցոտէ
«Աւերակներ շինէ բոյն
«Եւ ծիծեռնակ գայ ու երթայ
«Միայն հայոց գայ գարուն...»։

Ազգային սրտայոյզ սա երգի տխուր եղանակի ձայներէն կը սթափիմ, պահ մը շուրջս կը նայիմ։ Դիշեր է. լուսին կը պսպղայ անխռով, երկինք կը նայեմ, կը դիտեմ պսպղուն աստղերն ու փայլող լուսին և նոյն երգի մէկ տունն ալ ես կերգեմ.

«Լուսին լուսին այօդ աւետուն
«Պահէ՛ հայոց ոսկորներ.
«Եւ մայիսի գարթ ցօղով
«Ցօղէ՛ աճոնց շիրիմներ...»։

Եւ նոյն րոպէին կարծես մայիսեան ցօղը կիջնէ աւերակ մենաստանի աւերակներու և հովտի մէջ ընկած անթաղ ու յօշոտւած դիակներու վրայ։

Արշալոյսը կը շառագունի արեւելքէն։ Տաճարը կերթամ։ Ո՛վ պիտի երգէ «Առաւօս լուսոյն»։

Տաճարիկու զինւորներ գլուխնին բացած և տաճարի մերկ սալայատակի վրայ կայնած «Առաւօս լուսոյն» երգեցին, այնքան անուշ, այնքան յուզիչ որ բոլորս միասին լուռ արտասուեցինք։

Արեւը կամաց կամաց կը բարձրանար ու ես հայրենեացս արիւնոտ արշալոյսի բոյր ու հրապոյրէն հմայւած, մայիսեան շաղով ու ցօղով և հայ արիւնով ներկւած վարագայ մենաստանին կուտամ վերջին համբոյրս կը կատարեմ ուխտս ու կը հեռանամ արցունքը, աչքերուս փափաքը սրտիս։

Այն օրէն ես հեռացայ հայրենիքէս, արցունքը աչքերուս, փափաքը սրտիս, և Կովկասի մայրաքաղաքը եկայ։

Հայկազուն

Լաոկօճի արձանը

*) Վարագայ հովտի մէջ ծուռած դիրքով մի բարձր քարաժայռ է որու հովանու ներքև կը հանգչեն ուխտաւորները։

† ԳՐԻԳՈՐ ՋՕՀՐԱՊ

«Կ. Պոլսում կախաղան հանուել է Թրքահայ ականաւոր գործիչ, Գրիգոր Զօհրապը»։

Գրիգոր Զօհրապ

Այսպէս գուժեցին լրագիրները Թրքահայ գրականութեան վեթերան Գրիգոր Զօհրապի ողբալի մահուան լուրը։ Ո՞վ էր Զօհրապը։

Կ. Պոլսոյ, Պէշիքթաշ պիւղի մէջ, 1861-ին ծնած է Զօհրապը, որ հայրենակից է անուանի բանաստեղծ Մկրտիչ Պէշիքթաշլեանին։

Զօհրապը իր նախնական ուսումը ստացած է, Պէշիքթաշի Մաքրուհեան և Օրթագիւղի Թարգմանչաց և Լուսաւորիչեան վարժարանաց մէջ։ Իր հայերէն գիտնալու մասին Զօհրապը հետեւեալ կը գրէ. «Ոչ հայերէն լեզուն սորված եմ և ոչ ալ հայ գրականութեան մասին հմտութիւն ունիմ, ինչպէս այս գրականութեան մէջ մուտք ունեցեր եմ, ես ալ չեմ գիտեր լաւ մը»։

Դեռ 17 տարեկան, Զօհրապը գրական ասպարէզ կիջնէ, 1878-ին։ Այս թուէն սկսեալ նա լրագիր օրաթերթի մէջ կը գրէ խմբագրականներ և հրապարակագրութիւններ։

Պերլինի Վեհաժողովի շուրջ, Զօհրապը գրական վէճի կը բռնուի մեծանուն Մինաս-Չերազի հետ։

Իր հրապարակագրական գործունէութիւնը Լրագիր-էն յետոյ, Զօհրապը կը շարունակէ «Երկրագունդ»-թերթի մէջ, ազգային և գրական երկար յօդուածաշարքերով, որոնց մէջ ուշագրաւ է «Ձինական նամականին»։

† Օրիորդ Սաթենիկ Օհանջանեան

Մտնելով Արփիար Արփիարեանի հրատարակած «Մասիս»-ի խմբագրութեան մէջ, Զօհրապը կը հրատարակէ իր գրական առաջին աշխատութիւնը, «Անհետացած սերունդ մը» վերնագրով վէպ մը, որու համար վերջէն ինքը այսպէս կը գրէ. «ողորմելի վէպ մը որ ոճմանթիք և բնապաշտ ձգտումներու յիմար խառնուրդ մընէ»։

«Մասիս»-ի և «Արեւելք»-ի մէջ Զօհրապը յաջորդաբար կը հրատարակէ «Ներսէս», «Արմենիսա» և ուրիշ խորագրով նորավէպեր։

1893-ին Թրքահայ յայտնի գրագէտ Հրանտ Ասատուրի հետ, կը հրատարակեն «Մասիս»-ը իբր գրական հանդէս, որը վերջէն ինքը, Զօհրապը առանձին կը շարունակէ։ Իր հրապարակագրական վերջին փորձը «Մասիս» օրաթերթին հրատարակութիւննէ, (1898), բանաստեղծուհի Սիպիլի և Հրանտ Ասատուրի աշխատակցութեամբ։

Զօհրապը, դեռ չափահաս, փորձած է գրել բանաստեղծութիւնը, հրատարակելով քանի չափ քերթուածներ։ Զօհրապը աշխատակցած է Թրքահայ հին ու նոր թերթերուն։ Գրական ժողովածուներու մէջ, Զօհրապը ա. տեղ կը գրաւէ իր նորավէպերով։

«Ազատամարտ» օրաթերթի մէջ Զօհրապը հրատարակեց իր կեանքի վերջին արտայայտութիւնները «էջեր ուղեւորի մը օրագրէն» խորագրով։

1911-ին Զօհրապը հրատարակեց իր նորավէպերու երեք հատորները. *Խղճմտանքի ձայներ, Կեանքը ինչպէս որ է և Լուռ ցաւեր*։ Զօհրապը վերջի երկու տարիները գրեթէ քաշուած էր գրական ասպարէզէն։

«Գրական գործունէութեանս շրջանը փակելու համար, միտք ունիմ պզտիկ թատերախաղ մը գրել, որուն նիւթը արդէն մտքիս մէջ պատրաստէ»։ Այսպէս ըսած էր Զօհրապը իր գրական ասպարէզէն հեռանալու մասին։

Ֆրանսացի յայտնի գրագէտները Զօհրապի մտերիմ բարեկամներն էին։ Եւրոպական մամուլը կը զբաղէր Զօհրապով։ Նա հմուտ էր հայերէն, ֆրանսերէն, անգլիերէն, թիւրքերէն և ուրիշ եւրոպական լեզուներուն։

Օսմանեան Պարլամենտի անդամ ընտրուեցաւ 1908 և 1912 թուականներուն։

Զօհրապը հայ գրականութեան Գի տը Մօպասանն է։ Իր պատմելու ձեւը հմայիչ, սեղմ և հաճելի է, լեզուն՝ ոճին պէս պարզ, դիւրաթեք, կուռ, կենդանի և պատկերաւոր։ Նա թողեց Արփիարեանի շօշափած հարցերը, հեռացաւ ոսմանիզմէն և մօտեցաւ բնապաշտութեան (naturalisme)։

Պոլսահայ աշխարհիկ լեզուի մաքրութեան ու ճկունութեան մէջ Զօհրապի դերը մեծ է։ Զօհրապի իւրաքանչիւր նորավէպը հայ գրականութեան համար գողտրիկ գոհար մըն է։ Հաճոյքով կը կարդանք Զօհրապի նորավէպերը «իրենց բոլոր թերութիւններով և աքանչելիքներ»։

Մոսկուայի հայ սանիտարական խումբը-բժշկուհի Ուսաեեանցի գլխաւորութեամբ ս. Իջմիածնում։ Մէջտեղը Սինօդի անդամ ն. Բաբգեն վարդապետը։

բով». Ահը առջև կը պատկերանայ Պոլիսը իր բոլոր կողմերով, ինքը Զօհրապը, Պոլսոյ մարմնացումն էր։ Զօհրապի նորավէպերու մեծ մասը կը շօշափեն կինն ու սէրը։ Կինը Զօհրապի նորավէպերու մէջ, միշտ ևդած է իբրև վերիժառու, նենդ, կեղծաւոր, փոփոխամիտ և թեթևաբարոյ։ Իր քառասունէ աւելի նորավէպերու մէջ չը կայ կին մը, մէկ հատ իսկ, որ գոնէ ուղղամիտ մնացած ըլլայ իր սիրոյն։ Զօրապը աստիճան մը ևս յառաջ երթալով, կը ներկայացնէ ընթերցողին, այնպիսի կին մը, որուն ամուսինը ղինք լըքած ըլլալուն համար, այդ կինը իր ամուսնոյ վրէժը բոլոր այրերէն կառնէ։

Զօհրապը գրագէտ ըլլալէ առաջ հմուտ և կարող փաստաբան մըն էր։ Եւ թրդէն իր նորավէպերէն շատերը պաշտպանողականներ են։

Թրքահայութիւնը, յանձին Զօհրապի, կորսնցուց իր գրագէտ, երեսփոխան և կալող ու խորագէտ փաստաբան, այն փաստաբան Զօհրապը, որ իր խորիմաստ ու հմայիչ ճառերով ու պաշտպանողականներով, մահէն ու կախաղանէն կրցած էր ազատել հազարաւորները, այն Զօհրապը անկարող եղաւ պաշտպանել ինքզինք և ազատել իր անձը Թրքական ճաթաղանէն։

Եւ յունիս ամսին Պոլսոյ մէջ կախեցաւ Զօհրապը, իր մարմինը ճօճաց կախաղանին վրայ։

Դերեզմանի արժանի եղաւ արդեօք մեր վեթերան նահատակի մարմինը։

Յարգանք սուրբ յիշատակիդ, հանգիստ նահատակ մարմնոյդ, և փառք փառաւոր անւանդ վէհ գործիչ Զօհրապ։

Հ. Ածէմեան

† ՍԱԹԵՆԻԿ ՕՀԱՆՋԱՆԵԱՆ

Դալար, կենսունակ ու բուրաւէտ մի կեանք էլ կտրից անողոք մահը, առանց այն էլ կիսամայի մեր միջից։ Պարտաճանաչութեան գոհ գնաց նա, որ պատանի հասակից արհամարհելով անասնական-անհատական կեանքը, նետուել էր ազգային-ժողովրդական ասպարէզ և իր չքնաղ անձնւէր գործունէութեամբ հազարաւոր բարիքներ սփռել շուրջը։ Զը խորշելով նոյնիսկ անարդ բանտային սպառնալիքից և մերձաւորին օգտակար լինելուն համար նոյնիսկ գեռ 17 տարեկան հասակում բանտ նստելով, երկինք սլացած օր. Սաթենիկ Օհանջանեան հոկտ. 2-ին Թիֆ. Բաղաք. Արամեանցի հիւանդանոցում վաղ առաւօտեան վախճանուեց և հոկտ. 4-ին մեծ շուքով մարմինը Ալոջիվանքի գերեզմանատանը աւանդ տրուեց սև հողին։

Օր. Սաթենիկ Օհանջանեանի մահը նոյնքան հոյակապ է, որքան և իր կենսաթար կեանքը։ Իբրև գըթութեան քոյր ս. Էջմիածնում բծաւոր տիֆով վարակուեց իր խնամքին յանձնուած հիւանդներից. Հանգուցեալը երախտիք ունի և Մեղու Աշխատանքի Տան Ընկ. վրայ, որի քարտուղարն էլ է եղել։ Մեղուն Սաթենիկ Օհանջանեանի անունով գրադարան-ընթերցարան է բանում։ Հանգուցեալը միշտ եղել է այնտեղ, ուր իր ներկայութիւնը կարևոր է եղել. և ահա սրան տեսնում ենք և Ադանա և վանա և կ. Պոլիս և վան։ Մի այլ անդամ մենք կը տանք օրինակելի հայ կնոջ կենսագրականը, իսկ առայժմ մխիթարւենք, որ հայ կիսաւեր ազգը չէ գադարում նւիրաբերել Սաթենիկ Օհանջանեանի նման սքանչելի զաւակներ։ Տ.

Ա Զ Ք Ե Ր

(Ձօնւած Ս. Մ. Թ-ին)

Դուք, յաւերժ աշխոյժ, բոցավառ, յոգնատանջ աչքեր...

Աչքեր, որ վաղորդեան ցօղով փայլում էք իբր ալմաստ, իսկ գիշերային խաւարում շողշողում էք աստղանման։ Կախարդիչ աչքեր...

Օ՜, ինչպէս յաճախ ձեր քնքոյշ գգւանքի հէքիաթական անդորրում, հեշտասէր տենչանքի արբեցուցիչ վհի մէջ թալկացած սուզւում է դողդոջուն հոգին։ Դուք, այրող աչքեր...

Անգութ գեղանի աչքեր, նենգաւոր քնքոյշ, կըրքերով վառւած, դուք անմիտ աչքեր...

Դուք, որ խորհրդաւոր տարիքում թագուն ջերմացնում էք անամօթ սէրը, որ վաղ գարուն կեանքում անցնում է ինչպէս փոթորիկ։ Դուք, որ վերացնում էք մարդուն մինչև բանաստեղծական առասպելների վերին բարձունքը և կրկին վայր գլորում անմիտ կրքերի անյատակ անդունդը։ Դուք, աշխոյժ աչքեր...

Ասացէք, արդեօք դուք չէք ստեղծում սքանչելի աշխարհները, դուք չէք կանգնում բանաստեղծական մուսաների օտարերկրեայ պարնասները, ուր վառ վարդեր քնքոյշ վայելքում բորբոքւած հոգիները իրանց քաղցր ինքնամոռացութեան մէջ աւետում են աշխարհին ձեր յաղթանակները..

Դուք, որ ստիպում էք մեծ զօրապետներին զընել զէնքերը ձեր ոտքերի առաջ և անգութ ոճրագործներին դարձնում էք րոմանտիկ հերոսներ, ասացէք, ո՞ր հրաշքի հողմի մէջ էք ծնւել դուք։

Ո՞ր խորհրդաւոր ձեռքերն են հիւսել այդ սև թերթերունքի գեղեցկաձև շրջանակը, որ գգւում է ձեզ իր քնքոյշ գրկում։

Երկինքը խոռվող գիշերային այն ո՞ր խաւարն է թագնւած ձեր մէջ...

Բացէք, հրաշալի աչքեր, ձեր մոգական գաղտնիքը, որ բանում է խորքը թագուն ուժերի, որ տարերային պարով այնպէս արբեցնում է ինձ...

Ես կը հիւսեմ ձեզ իմ հոգու գրանիտի քնքոյշ ծոպերից անվերջ թախիծի ատլասէ պատկ, կը թրջեմ, նրան վաղորդեան արշալոյսի քնքոյշ անուշիկ հոտով և կը ձգեմ ձեր վհի մէջ. ես կը խլեմ հզօր աստւածների թանգագին թագերը, կը ցողեմ նրանց այգինների գեկեցկութեան խոշոր ադամանդներով, կը շրջապատեմ երկնքից գողացած փայլուն աստղերի սքանչելի ժապաւէնով և կը տամ ձեր իշխանութեան։ Բացէք ձեր արգելւած գաղտնիքը, որպէսզի նրա խորութեան ջրապտոյտի գայթակղիչ յորձանքում հալւէր իմ հոգու խոռվայոյզ կիրքը։

Իմ երկաթէ կամքով ես կը խորտակեմ այն աշ-

խարհատեղծման հիմքերը, որին մարդու հազարամեայ ջանքերը չեն կարողացել շարժել և նրանց քաօսից կը ստեղծեմ օտարօտի ցնորքների մի առասպելական ամրոց, ուր խանդավառ արբեցութեան մէջ կը ստեղծէք նոր աշխարհներ վաղանցուկ էակների, որոնք երգասացութեամբ կը փառաբանեն ձեր ուժերը։

Բացէք, աղաչում եմ ձեզ, ձեր գաղտնիքը...

Սակայն սառն անտարբեր հանդարտութեան մէջ պղտորւեցին նրանք և իրանց անհասկանալի տարերքի մէջ ինձ մի լուռ առեղծւած մի վեհապանծ սփինքս իմ հոգու համար.

. . . . . .

Այն յաւերժ աշխոյժ, կրակով բոցավառ, յոգատանջ աչքերը...

Բ. Գրիգորեան

ԻՄ ԲԱՐԵԿԱՄԻ ՁՐՈՑՑՆԵՐԻՑ

III

Տօթակէզ ամրան տեղի էր տւել մի զով աշնանային երեկոյ։ Շաղած մեղմ անձրևը արդէն մաքրել էր օդը իր մէջ եղած բոլոր փոշիներից, նոր թարմութիւն տւել մեր պարտիզի ծաղիկներին, որոնք այժմ բուրում էին մի առանձին անուշահոտութեամբ, ղրանով ողողելով մեր պատշգամբը, ուր ես զրուցում էի իմ միակ ամենամերձ բարեկամներիս—պ.պ. Զաչուլբազեանի և Զախչախեանի հետ։ Մեր խօսակցութեան նիւթը, ինչ խօսք մեր ազգային հրատապ խնդիրն էր, կապւած համաշխարհային պատերազմի ներկայ դրութեան հետ։

Պէտք է ասեմ, որ ամեն անգամ երբ մեզ հետ էր լինում և պ. Զախչախեանը, մեր զրոյցը միշտ մի առանձին կենդանութիւն, թոյլ տւէք ասեմ, երբեմն նոյնիսկ կրքոտ բնաւորութիւն էր ստանում. քանիոր պ. Զախչախեանը, չը նայած իր մաքուր անխարդախ բնաւորութեան, գաղափարականութեան, միշտ աւելի յոռետեսութեամբ էր վերաբերւում այն ամենին, ինչ-որ յաճախ այնպէս ոգևորում էր թէ ինձ և թէ պ. Զաչուլբազեանին։ Մեր պաշտած իդէալներին, մեր սրբազան ցնորքներին նա յաճախ մօտենում էր այնպէս սառն կերպով, նրանց բացասական կողմից, որ մի վայրկեանում նա սառն ջուր էր մաղում շարաթներով ու ամիսներով մեր քունը կտրած վարդագոյն երազների վրայ և այդ ժամանակ նրա դատավճիռն այնքան անողոք էր, որ յաճախ ստիպւած էինք լինում դրա համար նոյնիսկ կռւել նրա հետ, հայհոյել նրան...

Բարեբաղդաբար այդպիսի բան չը պատահեց այս անգամ։ Խնդիրը վերաբերում էր հայերի վերաբերմունքին դէպի ներկայ համաշխարհային պատերազմը։ Բանն այն էր, որ ինչքան հայ կամաւորական շարժումը մօտ էր մեր սրտին և նոյնիսկ պ. Զաչուլբազեանին ոգևորութեան մինչև եօթներորդ երկինքն էր բարձրացրել, այնքան դա, ընդհակառակն, անդուրեկան էր և խիստ զայրացրել էր պ. Զախչախեանին, որի լոզունգն էր այդ խնդրում—հայութեան խիստ չեզոքութիւն։

—Մեզ ինչ, թէ ամրողջ աշխարհն իրար կանցնի, թէ մարդիկ թէ ազգեր մոռացած իրանց բարոյականութիւնը և կուլտուրան սկսում են ըղկտել միմեանց իբրև կատաղի գազաններ... Հայ ժողովուրդը պէտք է իրան հեռու պահէր այդ համաշխարհային հրդեհից. նա պիտի խիստ չեզօք դիրք բռնէր և աշխատէր այդպիսով մի կերպ անվտանգ պահել իր գլուխը։ Նա պէտք է խոհեմութեամբ կծկւէր մի անկիւնում և համբերութեամբ սպասէր այս ահռելի պատերազմի վախճանին և եւրոպական կօնդրէսին, երբ նա կարող էր դնել իր արդար պահանջները... այնինչ այժմ այսպիսի մեծ աղմուկով նա հրապարակ գալով իր կամաւորներով իբրև մի կուռող կողմ, աւելի գաղանացրեցնոգևարք Թիւրքիային, արեան ծով դարձարձրեց իր երկիրը և թղթի վրայ դրեց մի անգամից իր գոյութեան խնդիրը։

Եւ իսկապէս, մի որոշ խոստում կամ երաշխիք է ստացել հայն իր հովանաւորներից ապագայի մասին, իր այս մեծահոգի և հերոսական գործունէութեան համար.—իսկապէս ոչինչ կամ յամենայն դէպս շատ քիչ, այն էր անորոշ, երկդիմի, միջապատ... Չէ՞որ մեր առաջ ունենք մի լաւ օրինակ—Լեհաստանը։ Դեռ պատերազմի էն սկզբից, երբ լեհ ժողովուրդը դեռ նոյնիսկ հաշիւ չէր տւել ինքն իրան այդ մասին, դեռ չը հաշւած և այն, որ նա մատը մատին անգամ չէր տւել, նա միանգամից ստացաւ մի այնպիսի մեծ խոստում, որը համարեայ ապշեցրեց շատերին։ Իսկ հայը իր այս 8—9 ամսի տենդային անձնուրաց գործունէութիւնից յետոյ էլ դեռ կանգնած է մի դժւարին դիւլիմայի առաջ—ինքն է այժմ սիրւած ումից որ պէտք է, թէ՞, օրինակ, քուրդը...

Վերջապէս եթէ հայը նոյնիսկ խոստումներ էլ ստանայ, որքան հաստատ կարող են լինել դրանք այժմեան դիպլօմատիայի կողմից, որը մի ձեռքով դրում է միւսով ջնջում, որտեղ 30—40 տարւայ դաշնակիցը միանգամից փոխւում է թշնամու կամ դարեւոր պաշտպաններն այժմ իրանք ոմբակոծում են իրանց նախկին բարեկամի ամրութիւնները...

Պ. Զախչախն այնպէս էր տաքացել, որ նա ըսպառնում էր մինչև լոյս շարունակել իր վիճաբանութիւնը, սակայն մեր համբերութիւնն արդէն սպառւում էր և վերջապէս ընդհատեց նրան պ. Զաչուլբազը...

—Դուք, սիրելի Զախչախ, իսկապէս նոր ոչինչ չէք ասում և միայն կրկնում էք այն ինչ-որ նման դէպքերում միշտ ասել են մեր խոհեմ պահպանողականները, նրանք, որոնք երբէք կողմնակից չեն եղել ակտիւ գործունէութեան և միշտ դերադասել են իրանց բաղդը շարունակ ուրիշների ձեռքում, մնալով միշտ մուրացիկ աղերսների դերում... Այն-ինչ վերջին կէս դարու պատմութիւնը պարզ ցոյց տւեց, թէ դեռ անփոփոխ իր ուժի մէջ և պատմական ասացւածքը—«Սահմանիք ֆաջաց զհնն իւրեանց. ոչ ոք հասանիւ, այնոք ունի»։ Այո, մենք բաւականին շատ սպասեցինք և առաւել շատ խնդրեցինք, սակայն ոչինչ չը ստացանք. այժմ մնում է փորձել վերջին միջոցը—զէնքը, որին դիմում ենք, կասենք, նոյնիսկ մեզնից անվախ։ Եւ ուրիշ կերպ լինել չէ կարող. համաշխար-

ЗАВЕКЪ

հային այս իրարանցման մէջ հայը իսպառ ոտքի տակ կը գնայ, եթէ նա չը կարողանայ դիմադրել, կուռել և յաղթել... Դուբ, պ. Զախչախ ամենաղատասպարտելի լաւատեսը կը լինէք, եթէ քոյլ տայիք ձեզ մի րոպէ պնդել, որ իրերի այսպիսի դրութեան ժամանակ թուրքն ու քուրդը կը խնայէին հային, եթէ նա շարունակէր մնալ նախկին պասսիւ դիտող անդէն ոայան... Ո՛չ, նրա ընաջնջողն այդ դէպքում նոյնքան հաստատ և ճիշտ էր ինչպէս երկու անդամ երկու—չորս: Հայ կամաւորական շարժման առաջին նպատակն է Թիւրքիայի պարտութիւնը և հայկական վիլայէթների աղատագրութիւնը նրա անողոք լծից. իսկ թէ ինչ ձև կը ստանայ այդ աղատագրութիւնը, դա ապագայի խնդիր է և, յամենայն դէպս, ինչ էլ որ լինի, նա ներկայից աւելի վատ չի լինիլ: Ռուսական պարզ տիրապետութիւնից սկսած մինչև Հայաստանի կատարեալ անկախութիւնը, Թիւրքահայը միշտ կարիք պիտի ունենայ Ռուսաստանի հովանաւորութեան, նրա պաշտպանութեան, առանց որի նա երկար չէ կարող պահպանել իր գոյութիւնը ասիական վայրագ մահմեդականութեան բացարձակ մեծամասնութեան մէջ: Էլ այսպիսի կրիտիքական մոմենտում, ինչպէս թողնել մի կողմ ասիական խնդիրը—համիդական բռնակալութեան տապալումը—և վիճաբանութիւն սարքել ապագայում ստացելիք իրաւունքների շըրջանակի մասին: Եթէ մինչև անգամ ենթադրենք, թէ հայ կամաւորական անձնազոհ գործունէութիւնը շատ քիչ գնահատւի Ռուսաստանից և Թիւրքահայաստանին զլացւի աւտօնոմիա, սակայն չէ՞ որ վերջում խաղաղութեան կոնգրէսում անշուշտ այդ մասին ձայն կարող են բարձրացնել և դաշնակիցները, որոնք ահա 30—40 տարի է ամենևին չէին մերժում Թիւրքահայութեան իրանց պլատոնական քաղցր ժպիտները, վարդագոյն յոյսերը... Ո՛չ, միահամուռ ուժերով նըպաստենք արդար գործի յաղթանակին և յետոյ դեռ շատ կարող ենք խօսել իրաւունքների մասին...

Զախչախեանն, ի հարկէ, չէր համոզւում, նա դեռ ասպարէզ էր կոչում ըէակցիայի ուրուականը, յարութիւն էր տալիս Լօբանովների, Գօլիցինների ստւերներին. սակայն ստիպւած էր տեղի տալ կատարւած իրականութեան առաջ և լռել: Իսկ փաստն այն էր, որ հայ կամաւորական շարժումը ոչ թէ մի մասնաւոր սիրողական խմբի բնաւորութիւն էր կրում, նա այլևս ոչ թէ մի կուսակցութեան գործ էր, այլ մի ամբողջ համազգային շարժում, որ ոգևորել և ընդգրկել էր իր մէջ մեր բոլոր կուսակցութիւններն ու դասակարգերը:

—Այժմ այլևս ուշ է խօսել այն մասին, թէ ինչու առաջ եկաւ մեր կամաւորական շարժումը—ասում էի ես պ. Զախչախին,—կամ ինչպէս է նրա կազմակերպութիւնը, թող այդ հարցերով զբաղւում տրաքացնեն մեր ապագայ պատմագէտները: Իրողութիւնն այն է, որ այդ քայլն արդէն արւած է և նրան այլևս ոչ կարելի է յետ դարձնել և ոչ նոյնիսկ դա ցանկալի է: Այժմ պիտի մտածենք միայն յաջողութեամբ մինչև վերջը տանել սկսւած գործը: Եւ ահա այժմ մեր առաջ կանգնած են երեք հրատապ խընդիրներ.—կամաւորներին նպաստելու գործը, փախստականների վերահաստատուն ու աւերւած գիւղերի նորոգումը և կռիւը հիւանդութիւնների դէմ: Երեքն էլ հսկայական գործեր են, որոնք պահանջում են հայութիւնից իր բոլոր բարոյական ու նիւթական ուժերի մոբիլիզացիան, զոհաբերութիւնը: Հայութիւնն այժմ կանգնած է մի այսպիսի պատմական եղակի մոմենտի առաջ, որը առաջինն է նրա 7—8 դարեայ ստրկութեան շրջանում և ահա այժմ մեր միակ նշանաբանը պէտք է լինի—այժմ, կամ երբեք: Եւ եթէ մի վայրկեան մտածում ենք, որ իրօք սա այսպէս է, այն ժամանակ մեր աչքում դեռ շատ քիչ են թւում եղած բոլոր անձնական զոհաբերութիւնները: Այնտեղ, ուր ազգութեան ապագայի խնդիրն է վճռւում, պէտք է այլևս չը խնայել մի քանի հազար մատաղ կեանքեր և ոչ էլ միլիօնների գումարներ, քանի-որ այլապէս սրանք այլևս ոչ մի արժէք չէին կարող ունենալ: Այո, հասել է արդէն սրբազան րոպէն, երբ երկու որդի ունեցողը գոնէ մէկը պէտք է ուղարկի կուռելու ազատութեան կուի մէջ, երբ երեք շապիկ ունեցողը պիտի նւիրի նրա համար անպատճառ երկուսը: Զը փոքրացնենք ահաւոր վտանգը արհամարհելով սուրբ գործը. կոյր ու խուլ չը ձևանանք այնտեղ ուր պէտք է տեսնել և լսել ամեն բան: Եթէ այսպիսի ճակատագրական մոմենտում մենք չը կարողանանք պատւով դուրս գալ այս վեհ և սրբազան գործից մեզ անշուշտ կը վիճակւի ընաջնջում և դրան մենք լիովին արժանի կը լինինք... Ուրեմն դէպի գործ, հեռու սուրը աստղարիզից թոյլերը, վատերը, մտավախները, ժլատներն ու անպէտքերը: Թող համարձակ առաջ գան ամենքը, առանց խնայելու իրանց կեանքը կամ ոսկին: Դժբաղդ, աբիւնաններիկ հայրենիքը մեզ է սպասում, անհամբեր, նա մեզ է կանչում: Գնանք դէպի նրա գիրկը. մեր արիւնով վաստակենք յաղթութեան դափնին, ահեղ կուռվ կորզենք անողոք թշնամուց նրա ազատութեան պակը: Էլ ժամանակ չէ քննադատութեան, բծախնդրութեան: Վիճակը ձգւած է արդէն. մեր նահանջի նաւերն այրւած են մեր ետևից. այլևս չի կարող լինել յետադարձ. վերջինն է մեր այս ճիգն ու ջանք. Օ՜ն, ուրեմն խոտացնենք մեր հերոս քաջերի հուժկու շարքերը, չը խնայենք նրանց համար ոչ մի բան. ոտքի կանգնենք մենք ամենքս ինչպէս մի մարդ, կըռւենք, զոհաբերենք, տոկանք նեղութիւններին և անսասան հաւատանք երջանիկ ապագային...

Ես կարծես ինքնամոռացութեան մէջ էի ընկել, այնպէս խորին և անկեղծ էր իմ ոգևորութիւնը, որ նրանով ինչպէս մի պատանի, ոգևորւեց պ. Զաչուլբազանը, իսկ ապշած պ. Զախչախեանը ոչ միայն սիրտ չարեց իր սովորական սառը ջուրը մաղել, այլ գուցէ նա ինքն էլ վարակւեց մեր էքստազով. ընդհակառակն, ես այժմ զոհութեամբ նկատում էի, որ նա դարձաւ լուռ և մտախոհ. նրա յոռետես սրտում գուցէ սկսում էին վառւել յոյսի կայծեր...

Առաջին անգամ դա մի յաղթանակ էր, որ ես և պ. Զաչուլբազը տանում էինք նրա վրայ և դա մեզ ուրախացնում էր: Օ՜, եթէ կարելի լինէր նախ յաղթահարել մեր բոլոր յոռետեսներին, այնուհետև արտաքին թշնամուն յաղթելը շատ հեշտ կը լինէր:

Կէս գիշերը արդէն մօտ էր, գով քամին դադրել էր և պարտէզից դէպի վեր պատշգամբը արշաւած մոծակների գունդը ստիպեց իմ սիրելի հիւրերին ցրւել...

Դինօէլ

ԹԵՐԹԵՐ ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

(Օգոստափառ Փոխարքայ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեւիչի ճնորհաբեր գրասեան առիթով)

ԱՆՑՔԵՐ, ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԴՈՐԱԻՃՆԵՐ, ԵՒ ԴԷՄՔԵՐ

I

ՋՐՕՐՀՆԷՔԻ ԱՂԱՒՆԻՆ

18՚. Թւականն էր, յունւարի 6-ը Ջրօրհնեաց օրը։ Թիֆլիսի գրեթէ ամբողջ հասարակութիւնը վանքից շինւած ժամանակաւոր կամուրջով անցել էր Յորդանանի մօտ և այնտեղ խմբւել համքարների գոյնզգոյն դրօշակների շուրջը։ Խաչը ընկղմւեց ծուռ գետի մէջ, լողորդները ընկան ջուրը, իսկ անչափահասները ըստ սովորութեան բաց թողին իրանց հետ բերած աղաւնիները, որոնք օդում մի քանի պտոյտ անելուց յետոյ, թռան դէպի իրանց բները, իսկ մէկը՝ չքնաղ, սպիտակ աղաւնի երկար ժամանակ պըտըտում էր Յորդանանի շուրջը, ցած էր իջնում մինչև հասարակութեան գլուխները հասնում, նորից բարձրանում ու երկար պտըտւելուց յետոյ, աղաւնին նստեց առաջնորդական տան դրօշակի սուր ծայրի տակ շինուած դեղին գունդի վրայ։ Աղաւնին համարձակ մնաց այդ գունդի վրայ, նա չը վախեցաւ ոչ առաջնորդութիւնից, ոչ ամբոխի աղաղակներից։ Նա ուղղեց իր թևերը, կցահարեց իր փետուրները և դրօշակի վրայ հանգիստ նստած իր սիրուն աչքերով զննում էր մարդկանց։

Թափորը վնրադարձաւ վանքի բակը, հոգևորականները մտան եկեղեցին՝ աղաւնին նստած էր դրօշակի վրայ։

Թիֆլիսի թեմական առաջնորդ Մակար արքեպիսկոպոսը (յետագայում կաթուղիկոս) արդէն հանեց իր զգեստը և քահանաներից առաջնորդւած ուղևորւեց դէպի առաջնորդարանը, իսկ աղաւնին հանգիստ նստած էր դրօշակի վրայ... Սրբազանը բարձրացաւ աստիճաններով դարձաւ դէպի ամբոխը, խաչակնքեց, օրհնեց և աղաւնին թռաւ բարձր, բարձրացաւ տաբածութեան մէջ մի քանի պտոյտ գործեց և թռաւ անյետացաւ դէպի հիւսիս...

II

ՁՈՐՍ ՈՒՍՏԱԲԱՇԻՆԵՐԸ

Իւրաքանչիւր համքար ունէր իր ուստաբաշին և այդ ուստաբաշինները իրանք իրանցից ընտրում էին չորս աւագ ուստաբաշիներ, որոնք մեծ իշխանութիւն ունէին։ Այդ չորս ուստաբաշիներից մէկը զարափ Գիքօն էր, իմ հայրը։ Ամբողջ քաղաքը խօսում էր աղաւնու մասին, իսկ չորս ուստաբաշինները նիստ կազմեցին և վճռեցին մի փայտէ աղաւնի շինել և այդ աղաւնին ամրացնել առաջնորդարանի դրօշակի վրայ հէնց այնտեղ, ուր նստել էր Ջրօրհնեաց աղաւնին և ամեն անգամ, երբ որևէ հանդէսի ժամանակ դուրս էին բերում այդ դրօշակը, հասարակութիւնը նայում էր փայտէ աղաւնուն, մտաբերում էր Ջրօրհնեաց շքեղ և համարձակ աղաւնուն և չը տեսնողներին տեսնողները պատմում էին այդ դէպքը... Համքարներից շատերը միմեանց հարցնում էին, թէ ինչի աղաւնին նստեց հիւսների դրօշակների և ոչ ուրիշների վրայ և մի քանիսը այնպէս էին բացատրում, որ ապագան Թիֆլիսում շինողական պէտք է լինի, որ քաղաքը նորանոր և շքեղ շինութիւններով պէտք է ծածկւէը...

III

ՄԵԾ ԻՇԽԱՆ ՄԻԽԱՅԻԼ ՆԻԿՈԼԱԵՒԻՉԸ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅ

186. Թւականն էր։ Թիֆլիսը առանձնապէս զարդարւել էր։ Ամբողջ ազգաբնակութիւնը՝ այր և կին մեծ և փոքր լցրել էր քաղաքի փողոցները և տափակ կտուրները սկսած Սիօնի մայր եկեղեցուց մինչև վերայի խաչը, մինչև Սարուրթալօ, շատերը գնացել էին մինչև Մցխէթ դիմաւորելու Նորին կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլաևիչին, որ նշանակւած էր կայսր Ալէքսանդր II-ից Կովկասի Փոխարքայ և այդ օրը մտնում էր Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսը։ Ճանապարհին գծւած կանդնած էին Կովկասեան անյաղթելի զօրքերը Մեծ Իշխանին շքեղ-ջապատել էին իր պալատականները, վրաց, աղնւականութիւնը իրանց գոյնգոյն ազգային հագուստներով, համքարները և ամբողջ ազգաբնակութիւնը։ Ուրախ ժպիտը չէր հեռանում Մեծ Իշխանի շրթունքներից. Նա ողորմաբար գլուխ էր տալիս աջ ու ձախ իրան բարձրաձայն ողջունող հասարակութեանը։ Թիֆլիսը առանձնապէս ուրախ էր... Այդպիսի ուրախ տրամադրութեամբ ես շատ քիչ անգամ եմ տեսել իմ մայրենի ալեզարդ Թիֆլիսը, որը այդ րոպէին կարծես նախազգում էր, թէ ինչպիսի բարիքներով պէտք է լցնէ իրան Նա, որ այդ օրը իբրև Կովկասի Փոխարքայ արդէն գտնւում էր իր սրտի մէջ...

Մեծ Իշխան Փոխարքան ուղևորւեց Սիօնի մայր եկեղեցին և այնտեղ աղօթելուց յետոյ վերադարձաւ պալատը, որտեղ Նորին Բարձրութեան ներկայացան զանազան բարձրաստիճան անձնաւորութիւններ, ազնւականներ, ծառայողներ, Թիֆլիսի քաղաքագլուխը և շատ ուրիշները...

Հերթով ներկայացան և համքարների չորս ուստաբաշիները, որոնցից առաջացաւ զարափ Գիքօն, մի կարճահասակ նիհար մարդ և դիմեց Փոխարքային հետևեալ ճառով.

«Ջերդ կայսերական Բարձրութիւն, Ջրօրհնեաց սուրբ տօնը կատարելիս. երբ համքարները շրջապատել էին Յորդանանը, խաչը ջուրն ընկղմելուն պէս, ըստ սովորութեան երիտասարդները արձակեցին իրանց հետ բերած աղաւնիները, որոնք մի քանի պըտոյտ անելուց յետոյ ուղևորւեցին դէպի իրանց բները։ Այդ ժամանակ մի հրաշալի, ձիւնի նման մաքուր և սպիտակ աղաւնի հասաւ հիւսիսային կողմից և մի քանի պտոյտ գործելուց յետոյ համարձակ նըստեց մեր համքարներիս դրօշակներից մէկի վրայ։ Նա կցահարեց իր փետուրները, ուղղեց թևերը և

աներկիւղ նստած էր դրօշակի վրայ, խելացի և հպարտ հայեացքով զննելով ժողովուրդին և իր ապահովութիւնը ժողովրդի հաւատարմութեանը համարձակ վստահանալով։ Աղաւնին համքարային դրօշակի վրայ նստած հասաւ մինչև վանքի մայր եկեղեցին և երբ մեր սրբազան առաջնորդը օրհնեց ամենքին, աղաւնին շարժեց հզօր թեւերը և անհետացաւ հորիզոնում դէպի հիւսիս։ Այդ աղաւնին Դուք էք, Ձերդ կայսերական Բարձրութիւն, Դուք, որին մեր Ողորմած Օգոստափառ Կայսրը ուղարկեց իր սիրած կովկասը, նրա վիճակը և բարօրութիւնը յանձնելով Ձերդ Բարձրութեան հզօր բազուկների հովանաւորութեանը»։

Մի քանի րոպէից յետոյ Մեծ Իշխանը անցաւ պալատի պատշգամբը, ուր ուրախ ժպիտով նայում էր իր առաջ անցնող և Իրան ոգևորած ողջունող ժողովուրդին և համքարներին։ Դրօշակները անցնելու ժամանակ Նա մօտ կանչեց առաղծագործների դրօշակակրին և վերցրեց նրանից փայտէ աղաւնին։ Մի քանի ժամանակից յետոյ ի Տէր հանգուցեալ Կայսր Ալէքսանդր II-ից ստացուեց արծաթեայ աղաւնի կապոյտ ժապաւէնով, որ մինչև այժմ զարդարում է առաղծագործների համքարային դրօշակը...

IV

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ ՕԼԳԱ ՖԷՕԴՕՐՕՎՆԱՆ

Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխանուհի Օլգա Ֆէօդօրօվնան իր Բարձր ամուսնի աշխատակիցն էր։ Թիֆլիսի կանանց գիմնազիոնները, մանկաբարձական ինստիտուտը Նրա հիմնածներն են... Բայց ես պատմութիւն չեմ գրում, այլ դէպքեր և անցքեր։

Թիֆլիսեցի կանայք շատ շոայլում էին։ Ամենքը զարդարում էին թանգագին թաւիշէ հագուստներով...

Հարուստը չունևորից ոչինչով չէր զանազանում։ Այդ հանգամանքը շատ յաւ յայտնի էր Մեծ Իշխանուհուն և Նա, կամենալով արմատախիլ անել այդ շռայլութիւնը, մի քանի անգամ կէսօրին, մի կօզակ հետևորդ ունենալով, անցնում էր Գօլօվինսկի պրօսպէկտից դէպի Դվօրցօվայա փողոցը հագած չիթ դէրիա, վերին աստիճանի ճաշակով ձևած ու կարած։

Այդ լուրը կայծակի արագութեամբ տարածուեց քաղաքի մէջ և այնուհետև Թիֆլիսաբնակ բոլոր ազգութիւններին պատկանող կանայք հագնում էին բացառապէս չիթ դէրիաներ...

Դեռ արդէն եօթանասունական թւականներին չէր կարելի ճանաչել ծերունի Թիֆլիսը՝ արդէն կառուցել էր Փօթի-Թիֆլիսեան երկաթուղին, նա ունէր արդէն Մեծ Իշխանուհու անուան իգական երկու գիմնազիաներ, բացել էր արական երկրորդ գիմնազիան, քաղաքը ծածկել էր շքեղ շինութիւններով, Ղաբաղի անանցանելի ցեխոտ և կեղտոտ փլատակների տեղը բռնեց Ալէքսանդրեան սիրուն այգին, ուր նոճիների շուաքի տակ զբօսնում էին քաղաքացիք և ամառւայ շոգերին զովանում էին շքեղ աւազանների շուրջը...

Ամեն տեղ ակներև նկատւում էր Կայսերական Տան Անդամի շինող, գեղեցկացնող և փարթամացնող հզօր բազուկը։ Փոխարքայի ուշադրութիւնը ամեն բանի վրայ կենտրօնացած էր, ինչ-որ երկրին տալիս էր բարօրութիւն և բարգաւաճում։

V

ԱՐՏԱՔՍԻԱՆ ԳԻՄՆԱԶԻՍՏԸ ՄԵԾ ԻՇԽԱՆ ՓՈԽԱՐՔԱՑԻ ԱՌԱՋ

Թիֆլիսի I-ին արական գիմնազիան դեռ վերանորոգած չէր։ Գիմնազիայի արևմտեան բակը լցած էր վտիտ փայտով։ Դա գիմնազիայի խուլ տեղերից մէկն էր, ուր մենք, աշակերտներս, հաւաքւում էինք դասամիջոցին ծխելու և ահա մի օր մեր վերակացուներից մէկը պաղտնագող մեզ վրայ հասաւ և բռնեց ինձ և երեք ընկերներիս ծխելիս։ Հէնց նոյն օրը չորսիս էլ արձակեցին գիմնազիայից։

Ես վախենում էի հօրս այդ յայտնել, ուստի ամեն առաւօտ գրքերը կռանս տակ դուրս էի գալիս տանից, անցնում էի պալատի մօտով, բարձրանում էի սուրբ Դաւիթի սարը և ճիշտ ժամի 2-ին վերադառնում էի տուն։ Այդպէս տևեց չորս թէ հինգ օր... վեցերորդ օրը, երբ ես բարձրանում էի պալատին կից նեղ տրօտուարով, հակառակ կողմի անկիւնից յանկարծ երևաց Մեծ Իշխան Փոխարքան մի կօզակ հետևորդով...

Ես հագած ունէի գիմնազիայի համազգեստ, գլխիս կէպի։ Հանդիպումը այնքան անսպասելի և յանկարծակի, որ ես չը կարողացայ իջնել տրօտուարից և պալատի պատին ամուր կպած, աջ ձեռքս բարձրացի դէպի գլխարկս և տւեցի սովորական պատւի ողջոյնը։ Փոխարքան, ժպտաց իմ շփոթութեանը և սիրով շոշափեց այտս.,. վայրկեանում մտքովս անցաւ, որ միայն Նա կարող է օգնել ինձ ..

— Ձերդ կայսերական Բարձրութիւն, աղերսում եմ, օգնեցէք ինձ...

Փոխարքան իսկոյն շրջւեց և իր աջ բարևրար ձեռքը ուսիս դնելով, չափազանց մեղմ և սիրալիր հարցրեց...

— Ի՞նչ է պատահել, ինչ օգնութիւն ես խընդրում։

Ես կանգնած էի մէջ տեղը. տրօտուարի բարձր կողմը կօզակը, իսկ ցած կողմը Մեծ Իշխան Փոխարքան։ Նա այնուամենայնիւ այնքան բարձր էր, որ ես նրան նայում էի ներքևից վերև։

—Ձերդ կայսերական Բարձրութիւն ինձ երեք ընկերներիս հետ արձակեցին գիմնազիայից ծխելու համար։ Մենք ծխում էինք եւևի բակում, վերակացուն վրայ հասաւ...

—Եւ ձեզ արձակեցին, ասաց նա ժպտալով։ Պէտք չէ ծխել, քանի-որ արգելած է։ Առհասարակ պէտք է բոլոր կանոնները ճշտութեամբ կատարել։

—Լսում եմ Ձերդ կայսերական Բարձրութիւն...

—Իսկ դու լաւ ես սովորում, թէ ծոյլ ես։

—Ես բոլոր առարկաներից 5 թւանշանից պակաս չունեմ, ահա իմ յիշատակարանը...

—Լաւ, հարկաւոր չէ։ Գնա ձեր դիրեկտորի մօտ, պատմիր բոլորը, կարող ես բոլորը պատմել...

—Ես բարձրանում էի, յանկարծ երևաց մեր Մեծ Իշխանը, ես կպայ պատին, սովորական պատւի ողջոյնը տւի, Նա թոթովեց այտս, ես... արտասանեցի ես շտապով.

—Լաւ, լաւ, լաւ և ասա, որ ես խնդրում եմ ներել քեզ և նորից ընդունել։

—Ձերդ Բարձրութիւն ինձ հետ երեք ընկերներիս էլ ընդունել։

Փոքարքան ներողամտաբար ժպտաց։

—Այո և երեք ընկերներդ էլ, ասաց Նա և ափով քայլերով հեռացաւ...

Թող օրհնեալ լինի քո սուրբ յիշատակը...

VI

ՆԱ ԻՆՁ ՃԱՆԱՉԵՑ

Անցաւ երկու տարի ևս դիմադրիայի չորրորդ դասատանն էի։ Մի օր լուր տարածուեց, որ Փոխարքան պէտք է այցելէր դիմադրիան։ Բոլոր աշակերտներիս հաւաքեցին մեծ դահլիճը, բայց շուտով ուղեւորեցին իւրաքանչիւրիս մեր դասարանը։ Նորին Բարձրութիւնը կամեցել էր բոլոր դասարանները առանձնապէս այցելել։ Նա սկսեց երրորդ դասարանից։ Երբ Նա մտաւ մեր դասարանը, սիրտս սկսեց խփել...

—Չորրորդ դասարանն է, Ձերդ Կայսերական Բարձրութիւն, զեկուցեց դիրեկտորը...

Փոխարքան հայեացք ձգեց դասարանի վրայ... ևս նստած էի ետևի նստարանի վրայ։ Մեր հայեացքները պատահեցին։

—կարծեմ ես քեզ ճանաչում եմ, արտասանեց Նա, ինձ մօտենալով։

—Ես Ձերդ Կայսերական Բարձրութիւնից բարերարած և յաւիտեան երախտապարտ եմ...

—Իսկ ընկերներդ որոնք են։

—Նրանք, Ձերդ Բարձրութիւն մնացին երրորդ դասարանում, իսկ ես անցայ...

—Ափսոս, ափսոս, ասաց Նա ժպտալով, եթէ ես իմանայի, ես նրանց չէի ների, արտասանեց Նա հեռանալով...

Փոխարքան այցելեց բոլոր դասարանները և այնուհետև ուղևորուեց դէպի ուսուցչական սենեակը, որտեղ, ինչպէս յետոյ տեղեկացայ, Նա պահանջել էր իմ երեք տարեայ թւանշանները և նրանց ուշադրութեամբ զննելուց յետոյ նկատել էր դիրեկտորին...

—Այդպէս սովորող աշակերտին ձախելու համար մի՞թէ կարելի է դիմադրիայից արձակել, մի՞թէ ներդործելու այլ միջոցներ չը կային։ Աշակերտին արձակելիս պէտք է շատ զգոյշ լինել, շատ զգոյշ։ Մտածեցէք, որ նրա ամբողջ կեանքը աղավաղւում է։

Կովկասում բիւրաւոր ձերուներներ կան, որոնք իրանց սրտում փայփայում են Ձո անմոռանալի յիշատակը իբրև սրբութիւն սրբոց...

VII

ՓՈԽԱՐՔԱՑ ՄԵԾ ԻՇԽԱՆ ՆԻԿՈԼԱՑ ՆԻԿՈԼԱԵՒԻՉ

Մեր Այժմեան Փոխարքայ Նորին Կայսերական Բարձրութիւն Նիկոլայ Նիկոլաևիչը Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչի աւագ եղբօր Որդին է։ Այն Մեծ Մարդու եղբօր Որդին, որ իր վարչական ընդունակութիւններով և իր բարերար գործունէութեամբ բաղդաւորացրեց Կովկասը և այժմ Կովկասը լի հաւատով և յոյսով սպասում է Կայսերական Ողորմած Տան Աւագագոյն Անդամի ապագայ արդիւնաւոր գործունէութեանը, որ նա ցոյց է տուել բազմաթիւ պետական ասպարէզների մէջ։ Ողորմած Աստուածը թող օրհնէ և առաջնորդէ Մեր Փոխարքայ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի քայլերը։

Ց. Տէր-Գրիգորեան (Վանս)

Պատերազմի տեսարաններից

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԱՐՑԱԽԻ ՄԱՐԳԱՐԻՏԸ *)

Հիացմունքով կարդացի այս տարւայ Ապրիլի 4-րդ համարի առաջին երեսում Հինաւուրց աչխարող այգին, որի ներքև՝ իր գեղեցիկ ծածկանւան տակը Թագնւել է Արցախի մարզարիտը։

Ի՜նչ քաղցր, ինչ վեհ բան է լաւ երեխայ լինել, համակ մաքրութիւն, համակ միամտութիւն, համակ մաքուր տենչանք դէպի բարին, ճշմարիտն ու գեղեցիկը։ Եթէ այսպիսի անբիծ հոգիներ չը լինէին աշխարհում, իսկական բանաստեղծութիւն էլ դժւար թէ լինէր։

Այսպիսի մի մանկան պայծառ պատկեր է շողում այդ Հինաւուրց աչխարող այգու մէջ, Թերևս ինքը հեղինակը, իր երևակայած սիրուն այգու վարդենու Թփի վրայ վառւող վաղորդեան մի ցօղիկ, մի մարգարիտ, որի երեսին օրւայ փոշին դեռ չի նստել։

Նրա «ընդարձակ պարտէզը մի անտառի» չափ է. «բայց անտառներում վայրի գազաններ են ապրում», իսկ այս պարտէզը միայն «սիրուն Թիթեռներով, Թռչուններով է լի»։

Այնտեղ Թռչնակները «կանաչ Թարմ տերևներ են հոտոտում», որոնց վրայ արշալուսի շողն ու ցօղն է փալփլում. այնտեղ Թուփերի մէջ համեստ մանուշակն է կանգնած բաց-Թափիկ գլխով, իր խնկաբոյր հոտն անուշ։

Այնտեղ շաղոտ վարդն է բացւել տեսքը սիրուն բոյրն անուշ. գոյն-գոյն Թիթեռ, մժեղ, բզէզ հանդէս են բացել «ճախրում, լողում», հիացք շարժում, հանդիսարանի վայելքն անուշ...

Այստեղ կանգնած էին և «դարաւոր կաղնիներ» իրանց ամպածրար կատարներով կարծես իբրև պահապան որ «գազաններ» մուտ չը գործեն այն այգին, նրանց ճիւղերի մէջ սւսւալով, շշնջալով զեփիւռն իր մեղմիկ մեղեդին էր նւագում։

Իսկ գիշերը Թագուհի լուսնակի ցոլքերի տակ խաղաղ ննջում է այն չքնաղ պարտէզը։

Քնած չէ դեռ՝ Թառը ձեռքին կաղնու ճիւղին Թառած սոխակը, որ իր սրտաբեկ դայլայլիկով լըցնում է պարտէզը, քնած չէ նաև մենաւոր «գունատ, հիւանդոտ աղջիկը», որ պարտէզի մէջ «շնփուրուկի տակն է նստած»։

Նա իր հայեացքով Թաղւել է աստղերի աշխարհում, ուր մանր ու խոշոր լուսաւորներ առանց իրար խանգարելու, իրարից լոյս են առնում, լոյս են տալիս աշխարհին։

Ի՜նչ սիրուն են այս երկինքն ու այս պարտէզը։ Ինչպէ՞ս կուզէր «գունատ աղջիկ»-ը որ կեանքի պարտէզն էլ այսպէս լինէր, մարդիկն էլ լուսաւոր՝ աստղերի նման։

Բայց այլ բան է նւագում, երգում սոխակը. նրա լալահառաչ երգը վիշտ է բուրում, կեանքի վիշտը, կեանքի՝ որի մէջ սուտն ու ճշմարիտը, տգեղն ու գեղեցիկը, չարն ու բարին քովէ քով են աճում։ Նա սգախառն պատմում է Թէ կեանքի պարտէզը «գունատ աղջկայ» երազ պարտէզին նման չէ, այնտեղ Թաւուտներում Թունաւոր օձեր են սողում, լեռներում գազաններ են մռնչում, այնտեղ Թոյլ ու տկարի վրայ ուժեղն է յոխորտում, այնտեղ եղեռն ու ոճիրն են Թագաւորում։

Եւ այդ ընդարձակ անտառի օձերն ու գազան մարդակերպ են...

Սոխակի երգի, ողբի առաջ էլ աւելի է դունատուում «գունատ աղջիկը» և երգւում է հէքիաթների հերոսուհիների նման «երկաթէ կօշիկ հագնել, երկաթէ գաւազան ձեռք առնել աշխարհից աշխարհ ճամբորդել, սովորել, գիտենալ այն ճարը, հնարքը, որ կարող լինի կեանքի գազաններին սանձել, օձերի Թոյնը մեղմել, ոճիրն ու եղեռնը ջնջել, որ կարողանայ ցոյց տալ կուրութիւնից աչք բացած կեանքին, մարդկանց Թէ կայ մի պարտէզ՝ ուր գազան չը կայ, չարութիւն չը կայ, այլ միայն Թիթեռի պէս Թրթռուն ազատութիւն, Թռչունի պէս երգող երջանկութիւն, մի պարտէզ որ մարդիկ «աչքաթող են արել»։

Բայց «գունատ աղջիկը» անզօր է իր ցանկութիւնն իրագործել, նա Թոյլ է, կամքը փխրան, ուստի շեղւում է իր գծած ճանապարհից, մնում է տեղը նստած, Թաղւում է քան աստղը լուսաւոր մտորումների մէջ, որոնք դաժան կեանքում չեն իրականանում, այլ խորտակւում են. նա դեռ չը գործած լքում է և մեռնում ու գնում աստղերին խառնւելու։

Սկսնակ գրականութեան մի մարգարիտ է այս փոքրիկ ստեղծագործութիւնը. «Աչխարող այգին» ծաղկող շնորհքի շողերը վրան. բայց ափսո՜ս նա վհատութեամբ է վերջանում և «Աչխարող այգին» էլի մընում է աչքաթող, կեանքի այգին՝ էլի գազանաշատ։

Մենք կասենք՝ Արցախի Մարգարիտ, այդ երազ պարտէզը կեանքից դուրս է և միայն մաքուր հոգիների մէջ, այն սոխակը անբիծ սրտերում Թառած արդար խղճմտանքն է, որ կեանքի գէշութիւնները տանել չի կարող և հեկեկում է այլոց մեղքերի համար։

Սակայն չը պէտք է վհատել, պէտք է մտնել կեանքը՝ անուշ ցնորքը գրկած ու հզօր հաւատով աչխատել բանալ մարդկանց աչքերը, զարթեցնել քըմբած խիղճը, զգւանք յարուցանել նրանց մէջ դէպի եղեռն ու անարդարութիւն և նրանց աչքը դարձնել «Աչքաթող պարտիզի»-քաղցր կեանքի վրայ։

Եւ կը գան օրեր անձնւէր գործունէութիւնից յետոյ, երբ արդար խղճերը կը շատանան կեանքի մէջ, գազանութիւնը կը մեղմանայ և կեանքը կը մօտենայ «Աչքաթող այգուն» ու նման կը դառնայ։ Այն ժամանակ միայն «գունատ աղջիկը» կարող է մեռնել այն մեծ հաւատով ու համոզմունքով մխիթարւած Թէ՝ ինքը գործ արեց և Թէ իր գերեզմանը մարդկանց մարգարիտ արցունքներով պիտի զարդարւի, որպէս նշան երախտագիտութեան։

Ուրիշն դէպի գործ, Արցախի Մարգարիտ շնորհքը շահ կը բերի կեանքին։

Բ. վ.

*)Հեղինակը, որ ծածկւել է Margarite d'Artzakh ծածկանւան տակ հազիւ 14 տարեկան օրիորդ է Ղարաբաղցի, Բագւայ օր. գիմնազիայի VI դասարանի աշակերտուհի։

Խմբ.

ԱՌՈՂՋԱՊԱՀ

ԹԻՖԼԻՍԻ ԴԱՍԱԻՈՐՈՂ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ

Հիւանդանոցը բացւել է 1915 թւի դեկտ. 24-ից Նաւթլուղի Նիժեգօրօդեան հիծելազնդի շինութեան մէջ, որի տրամադրութեան տակ սկզբում դրւած է եղել շինութեան 4 կորպուսները, իւրաքանչիւրը 250 մահճակալով։

Բժ. Եր. Միւնասեան
Թիֆ. դասաւորող հիւանդան. տեսուչ

Հիւանդանոցի նպատակն էր՝ ընդունել գնացքներից հիւանդներն ու վիրաւորները, հասցնել նրանց բժշկական, ախտահանական առաջին օգնութիւնը և երեք-չորս օր պահելով, դասաւորել նրանց քաղ. հիւանդանոցներում։

Գործի սկզբնական կազմակերպումը յանձնւել էր բժ. Ա. Ր. Ֆիշերին, որ տարել է հիւանդանոցի բացման ու կահաւորման ամբողջ դժւարութիւնը։ Իսկ ներկայ թւի յունւար 20-ից սկսած բժ. Ե. Մինասեանը հրաւիրւում է որպէս հիւանդանոցի գլխաւոր բժիշկ։

Հիւանդանոցի գործունէութեան հէնց առաջին ամսից երևան են գալիս մի շարք թերութիւններ. այսպէս՝ չունենալով յատուկ ընդունարան, կուի դաշտից եկող հիւանդներն ու վիրաւորները գնացքից անմիջապէս փոխադրւում էին կորպուսները, ուր և նրանք հանւում-հագնւում ու լողանում էին. իսկ միւս կողմից վաննանների քչութիւնը հնարաւորութիւն չէր տալիս բոլորին լողանալ մի օրում։ Այս հանգամանքը հարկադրում էր կորպուսների մի մասը յատկացնել ընդունարանի ու պահեստի և նեղւածքութեան պատճառով յաճախ հնարաւոր չէր լինում ախտահանւած իրերը զատել չախտահանւածներից։

Հիւանդանոցը պարունակող կորպուսներն էլ կազմւած լինելով երկար, լերկ սրահներից, նոր ընդունւող հիւանդները խառնւում էին արդէն մաքուր ու կարգի բերւած հիւանդների հետ. իսկ որ գլխաւորն է, համաճարակի դէպքում հնարաւորութիւն չէին տալիս վարակւածներին չեզոքացնելու, կամ

Թիֆ. դասաւորող հիւանդանոցը
Բուխարի էմբրի նեբրած տաղաւորները

գէթ շինութիւնն ախտահանելու։ Այս անյարմարութիւնների դիմաց ծրագրւել էր կորպուսների սրահները տախտակորներով բաժանել մասերի, սակայն հիւանդների ամենօրեայ մեծաքանակ ընդունելութիւնը խանգարում էր դրան մինչև այնքան, որ յատուկ միջամտութեամբ փոխադրւեցին բոլոր հիւանդներն ու կատարւեց անհրաժեշտ աշխատանքն ու ախտահանութիւնը։

Թիֆ. դասաւորող հիւանդանոցի բժշկական եւ վարչական կազմը

Այս բոլորի հետ միասին ախտահանիչ միջոցների անկատարութիւնը, կոյուղու և քիմիական-մանրէաբանական լաբարատօրիայի բացակայութիւնը հնարաւորութիւն չէր տալիս 300—400 մարդու իրե-

Թիֆ. դասաւորող հիւանդանոցը

ղէններ ախտահանել օրեկան, հիւանդանոցն ու նրա շրջապատը պահել անհրաժեշտ մաքրութեան մէջ և շուտափոյթ որոշել հիւանդների պիակնողը։

Այս պայմանները վերացնելու համար հիւանդանոցի գլխաւոր բժիշկը այս տարւայ յունւար 28-ին վիրաւորների Գորձագիր Յանժնաժողովին տալիս է մի պեկուցում, որի հիմնական իղձն էր՝ հիւանդներն իրանց իրերով ևնթարկել ախտահանութեան նախքան կորպուսներում ընդունելը, որով և կառնւէր համաճարակների առաջը։

Գլխաւոր բժշկի կողմից առաջարկւում էր կառուցել ընդհանուր ընդունարան՝ յատուկ պերսօնալով, հերթապահ բժշկով, բաղանիքով և սափրանոցով. կա-

ուցել նոյնպէս ընդհանուր պահեստատեղ, կոյուղի, լաբարատօրիա և ընդարձակել ախտահանիչ կամերան։

Առաջարկութիւնն ընդունուեց և ձեռնարկուեց անյապաղ իրականացնել նրան։ Սակայն գործը ցոյց տուեց, որ դասաւորող հիւանդանոցը նաև փորը էր, և յաճախ տեղ չը լինելով, հիւանդները գնացքից ուղարկւում էին անմիջապէս քաղաքի հիւանդանոցները ուր և առաջ եկաւ բծաւոր տիֆ։ Այս հանգամանքը հակադրեց բարձր իշխանութեանը՝ ընդարձակել հիւանդանոցը, մահճակալների թիւը հասցնելով 2000-ի, որի համար յատկացուեցին 44 վրան 20-ական մահճակալներով, 15 իւրտ և ստեղծուեցին այլ յարմարութիւններ։ Այնպէս որ ներկայումս հիւանդանոցն ունի՝ 1) 4 կորպուս և 44 վրան՝ 15 բաժանմունքների տակ, որոնցից մէկը վիրահատական, մէկը սուր-վարակիչ, մէկը վէներական, միւսն էլ ընդհ. հիւանդների համար։ 2) 14 իւրտ՝ սպիտակեղէնի, վիրակապութեան և հերթապահութեան համար, 3) ընդհանուր ընդունարան՝ դուշերով, սափրանոցով, որ կարելի է ընդունել, մաքրել ու դասաւորել միանգամից 400, իսկ ուղարկել մինչև 1000 հիւանդ, 4) ընդհ. պահեստ՝ 2000 քսակների համար համարներով. 5) ախտահանիչ կամերա, որ կարող է ախտահանել օրեկան 1000 քսակ իրեր, 6) լւացարան 16 կաթսաններով՝ օրեկան 3500 կտոր սպիտակեղէն լւանալու և չորացնելու համար, 7) կոյուղի և 8) լաբարատորիա։

Բացի սրանից հիւնդանոցն ունի 1) նոր նորոգւած հանրակացարան, ուր ապրում են 65 գէ. քոյրեր, 2) մի ուրիշը միջին պերսօնալի համար, 3) բաղանիք, ուր շաբաթը երկու անգամ լողանում են ստորին պերսօնալի ծառայողները, 4) զօրանոց՝ 200 զինուոր-ծառայողների համար, 5) ճաշարան միջին պերսօնալի համար, ուր թէյում, ճաշում և ընթրում են աւելի քան 200 հոգի։

Դասաւորող հիւանդանոցը ներկայումս շատ բարձրաստիճան, ձեռնհաս այցելու անձերի կողմից վկայւում է, որպէս իր դերին լիով համապատասխանող մի հիմնարկութիւն։

Հիւանդանոցի առանձին մասերը ցոյց են տւել հետևեալ գործունէութիւնը.

Բժշկական պերսօնալը ներկայումս կազմում են գլխաւոր բժիշկը, 1 գլխաւոր վիրահատ բժիշկ, 16 օրգինատօր, 1 պրակտիկանտ, 1 ատամնաբոյժ, 16 ֆէլդշեր, 100 գէ. քոյր և 10 ուսանող-սանիտար։

Դեկտ. 26-ից մինչև ապրիլ 15-ը հիւանդանոցում ընդունւել են 2877 վիրաւոր (40-ը սպայ), որոնցից մեռել են 27 հոգի, 512 ցրտահարներ և 5551 հիւանդներ (142-ը թուրք գերիներ), որոնցից վարակիչ հիւանդներ 1146 (փորհարինք, տիֆ և այլն)։ Մեռել են 60 հոգի։

Մեծ օպերացիաներ են կատարւել զանազան տեսակների, թւով 320։

Տիֆի համաճարակին վարակւել են հիւանդանոցում գործողներից բծաւոր տիֆով՝ 2 բժիշկ, 2 ֆէլդշեր (1-ը մեռել է), 15 գէ. քոյր (1-ը մեռել է), 1 տնտեսուհի և 3 սանիտար։ Կրկնւող տիֆով՝ 1 բժիշկ, 1 գէ. քոյր և 1 սանիտար. որովայնային տիֆով՝ 1 գէ. քոյր, 1 սանիտար. սկարլատինայով՝ 1, անգինայով՝ 1 հոգի, բոլորը 30 հոգի։

Դեղատան ծառայողները 8 հոգի. դեկտ. 26-ից մինչև ապրիլի 20-ը գնած է բժշկական պիտոյքներ ու դեղօրայք 16,621 րուբլու, որից ծախսած է 12,668 ռուբլու, դեկտ. 26-ից մինչև մայիսը 1-ը մեռել են 16,196 դեղատոմս։

Լաբարատօրիան սկսել է գործել մարտի 1-ից՝ գլխաւոր բժշկի դեկավարութեամբ։ Կատարւել են 185 հետազօտութիւններ զանազան տեսակի։

Ատամնաբուժը մարտի 1-ից մինչև մայիս 20-ն ընդունել է 481 հիւանդներ, որոնցից 202 զինուոր, և 279 ծառայող։

Վարչական-տնտեսական մասում ծառայում են 1 կառավարիչ և 3 օգնական, 1 կառավ. տնտեսական մասի 1 օգնական, 1 տնտես և 2 օգնական, 1 հանդերձապահի և 3 օգնական, 10 տնտեսուհի բաժանորդներ, 1 նկուղապահ. 1 կառավ. ընդհ. ընդունարանի, 1 կառավարիչ ընդ. պահեստատեղի, 16 խոհարար և 354 ստորին դասի այլ ծառայողներ՝ կօրպուսներում, վրաններում, լւացարանում, հանրակացարաններում, սեղանատանը, բակում և այլն, բոլորը 396 հոգի։

Սնունդատանում են՝ հիւանդներն ու ստորին ծառայողները առաւօտեան թէյ սպիտ. հացով, ճաշ 2 տեսակի և կիրակի ու տօն օրերին քաղցրեղէն, երեկոյեան թէյ և տաք ընթրիք։ Իսկ դիէդիկներին յատուկ սնունդ։ Ընդհանուր առմամբ իւրաքանչիւրն ստանում է 1ֆ. հում միս, 6 մսխ. շաքար, հաց՝ ինչքան որ ուզին և ուրիշ բաներ։

Միջին և բարձր կարգի ծառայողներն ստանում են՝ թէյ սուրճ կաթով, պանիր և կարագ, նախաճաշ՝ մածուն կամ սուրճ, ճաշ երկու տեսակ, տօներին քաղցրեղէնով և տաք ընթրիք ու թէյ։

Մրեերներն ստանում են մեծ մասամբ քաղ. կապալառուների միջոցով։ Կերակուրները պատրաստւում են մաքուր կովի իւղով։

Հիւանդանոցը խնամել է մինչև սեպտեմբերի 1-ը 22,293 զինուոր։

Վերջին ժամանակներս հիւանդանոցն ընդունել է գաղթականներին և որբերին, որոնց խնամել, կերակրել և իր միջոցներով տեղաւորել է քաղաքի որբանոցներում կամ իր միջից կազմւած բժշկական խմբերու հսկողութեան տակ երկաթուղով ուղղել դէպի Ախալքալաք և Դալլար։

Իսկ վերջերս երբ Սարուրթալօի գաղթականական ապաստարանում խոլերա ծագեցաւ, նրա դէմ կուելու և առաջն առնելու գործը նոյնպէս յանձնւեցաւ հիւանդանոցի գլխաւոր բժ. Ե. Մինասեանին, որը իր փորձւած, հմուտ և անխոնջ աշխատակիցների շնորհիւ, մի քանի օրում համաճարակի առաջն առաւ և ապաստարանի մէջ օրինակելի կարգ ու կանոն մտցրեց։

Վերջին ժամանակներս հիւանդանոցի վարչութեան է յանձնւած նոյնպէս հիւանդների տեղաւորութեան գործը՝ Նաւթլուխից քաղաք, քաղաքից Նաւթլուխ և թէ քաղաքի մի հիւանդանոցից միւսը։ Այդ գործի համար Բաղաքների Միութեան Թիֆլիսի կոմիտէի բոլոր հաղորդակցական միջոցները, կառքերը, հանրակառքերը, աւտոմոբիլները, գտնւում են հիւանդանոցի վարչութեան հսկողութեան և տրամադրութեան տակ, և ահա մի ամսից աւելի է որ Նաւթլուխի հիւանդանոցը հեշտութեամբ և կանոնաւոր կերպով կատարում է իր վրայ դրւած այդ նոր և ծանր գործը։ Անհրաժեշտ է շեշտել այս մխիթարական երևոյթը, որ մի խումբ տեղական ինտելիգենտ ուժեր առանց աղգի խտրութեան միացած առաջին անգամ անցնելով մի այսպիսի խոշոր հասարակական հիմնարկութեան գլուխ, կարողացել են թէ օրինակելի կազմակերպութիւն ստեղծել և թէ վարել և արժանանալ յաճախ բարձրաստիճան քննիչների գովասանքների։

ՓՈԽԱՐՔԱՆ ԹԻՓԼԻՍՈՒՄ

Վանքի մայր տաճարումն էին պատսպարուած Փոխարքայի հետ նրա ամբոխինը Մեծ Իշխանուհի Անաստասիա Նիկոլաևնան, Մեծ Իշխան Պեսար Նիկոլաևիչը, իր ամուսին Մեծ Իշխանուհի Վիլհելմայի հետ, Մեծ Իշխանուհի Ելենա Գէորգիևնա, Նորին Բարձրութիւն Բոման Պետրովիչ, Իշխանուհի Նադեժդա Պէտրովնա։

Մեծ Իշխան Փոխարքան, դուրս գալով եկեղեցուց բակը, կրկին օդը թնդաց բարձրագոչ ուրռաններից, ոտով բարձրացաւ մինչև գարպասը, որտեղ և նըստեց նժոյգը և նոյն կարգով դիմեց դէպի մահմեդականների մզկիթը։

Մզկիթներում

Սիւնիների Ջումա-մզկիթը դրսից և ներսից շքեղ զարդարած է գորգերով և մուտքի մօտ տրօպիքական բոյսերով։ Բարձրագոյն Անձերին ողջունելու համար մզկիթում ժողովուել էին անդրկովկասեան սիւնի հոգևոր վարչութեան անդամները մուֆթի Հուսէյն Էֆէնդի Թահիրովի գլխաւորութեամբ, և մահմեդական հասարակութեան երկու ներկայացուցիչներ։

Մզկիթի մօտ մուֆթին ողջունեց Բարձրագոյն Անձանց, որից յետոյ ամենքը մտան մզկիթ, ուր հոգևորականութիւնը մուֆթիի գլխաւորութեամբ կատարեց հատկրճ աղօթք, որից յետոյ մուֆթին դիմեց Փոխարքային ճառով արաբերէն, որ յետոյ թարգմանուեց ռուսերէն։

Նիա Ջումա մզկիթը նոյնպէս գեղեցիկ զարդարած է գորգերով ու բուսականութեամբ։ Այստեղ Բարձրագոյն Անձերին դիմաւորելու համար ժողովուել էին մահոհոգևորականութեան վարչութեան անդամները, անդրկովկասեան շէյխ-ուլ-իսլամ Ախունդ Մամէդ Ախունդ Ալի-օղլի Պիչենամազ Ջադէի գլխաւորութեամբ։

Շէյխ-ուլ-իսլամը դիմեց Մեծ Իշխանին նոյնպէս արաբերէն ճառով, որ նոյնպէս թարգմանուեց ռուսերէն։

Պալատում

Յերեկոյեայ ժամը 2½-ին Փոխարքայի պալատում հաւաքուել էր քաղաքիս բոլոր աղդարնակչութեան բարձր հոգևորականութիւնը՝ սրբազան էքզարխի և թեմիս առաջնորդի իրանց աւագ քահանաներով, մուսուլմանների մուֆթին, շէյխ-ուլ-իսլամը, կաթոլիկ, բողոքական եկեղեցիների, հրէական հոգևորականութեան ներկայացուցիչները։ Ժամը 4-ից սկսեց սպիտակ դահլիճում ընդունելութիւնը։ Ընդունեցին նաև Թիֆլիսի և Քութայիսի ազնուականութեան պատգամաւորութիւնը, այնուհետև զինուորական, ներքին գործերի, ֆինանսների, գատաստան. երկրագործ. հայկն. մինիստրութիւնների կովկ. հաստատութիւնների պետերը։ Ապա Թիֆլ. քաղաք. դուման, վաճառական. մեշչանների, արհեստ. մոլականների հայկն, պատգամաւորութիւնները։

Երեկոյեան ժամը 7½-ին Նորին կայսերական Բարձրութիւնը առանձին ունկնդրութեամբ ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամաւորներին՝ էջմիածնի սինօդի անդամներ Յուսիկ արքեպիսկոպոսին, Բարգէն վարդապետին և Թիֆլիսի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին։ Յուսիկ արքեպիսկոպոսը Մեծ Իշխանին յանձնեց Կաթողիկոսի նամակը։

ՆՈՐԱԳՈՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԵՐ

Ե. Իշխանեան՝ *Աղէտի եւ տառապանքի աշխարհից, (այդ Թիւրքահայ փախստականներին) արդիւնքը յատկացւում է Տ. Նազարեանի Ճաշարանի օգտին։ 78 եր. գինը 40 կ. արտատպուած Ս՝շակից ընտիր թղթի վրայ։*

Գիտնական հեղինակի այս չոր ու ցամաք, ստուգուած փաստերի վրայ, աշխատութիւնը յուզում է ընթերցողին և զայրացնում, ապշեցնում, ապշահար տեսնելով թէ անփութութիւնը, վարչական անընդունակութիւնը ինչ աղէտ կարող են բերել անօգնական թշուառ մասաներին։

Հեղինակը իր այս աշխատութիւնը նւիրաբերում է Տ. Նազարեանին հետևեալ առաջաբանի փոխարէն իր Ներկս խօսք-ով՝

«Անօգնական եւ օտար միջավայրում տեգերող ժողովրդական բազմութեան ֆիզիկական կեանքի փրկութեան գործը մասնագման վտանգից՝ համարւում է մարդկային ամենամեծ առաքինութիւններից մէկը, որի առաջ պէտք է լռեն կուսակցական տարածայնութիւնները։ Տիգրան Նազարեանի ձեռնարկը—նրա հիմնած Ճաշարանը թիւրքահայ փախստականներին պարբերաբար կերակրելու նպատակ—բոլոր միացմունքների արժանի մի գործ է, որին նուիրում եմ այս փոքրիկ ընծան»։

Ապա երես 67—69-ում ասում է՝

«Կովկասահայ բուրժուազիան ապիկար գտնուեց իր յատուկ միջոցներով, անկախ գործող ընկերութիւններից, գոնէ հիմնել 200—300 որբերի համար մի ապաստարան՝ նրանց անելու, խնամելու և կրթութիւն տալու նպատակով։ Ջը գտնուեց գոնէ մէկը հայ միլիոնատէր կապիտալիստներից, որ բարոյական ժեստ ցոյց տար և կեանքի կոչէր գաղթից մեռնող դժբաղդ փախստականների համար մի ճաշարան հիմնելով։ Եւ այն, ինչ կարող էր հեշտութեամբ անել հայ կեսոսը, ինչ պարտաւոր էր անել հայ թեմի առաջնորդը, այսօր անում է մեր աչքի առաջ հայ գրական-հասարակական իդէալիստ գործիչը իր համարձակ ձեռնարկով (իմա Տ. Նազարեանի ճաշարանը)։

Սա կոյր պատահականութիւն չէ, այլ ամենաբնորոշ փաստերից մէկը մեր հասարակական իրականութեան մէջ։ Առաջին անգամ չէ, որ մամոնայի երկրպագուն՝ իբրև գրամական ոյժի ներկայացուցիչ և Աւետարանի աշակերտը՝ իբրև սրբագործած մօթալի ներկայացուցիչ, հանդիսատ ու անխռով բազմած փափուկ բարձի վրայ՝ ջերմ համերաշխութեամբ փայլում են իրանց հասարակական անտարբերութեան մէջ, թէկուզ ժողովրդական անօրինակ աղէտների հանդէպ։ Եւ միայն հայ անձնուէր կուլտուրտրեգերն է, որ լարերով իր ոյժերի մաքսիմումը, յանուն հանրական բարիքի, մաքառում է ամենատասակ խոչընդոտների դէմ։

Նման մեր մէջ պարզամիտ հրապարակագիրներ, որոնք փախստականների հարցում սպասելով հայ բուրժուազիայից չունեցած բարեմասնութիւնները՝ յուսախաբուեցին և բարոյական ամենակարգի մակդիրներով խարազանեցին նրան։ Բայց քիչ կան հէնց դրանց շարքում այնպիսիները, որոնք արամադծօրէն փոխում են իրանց ֆրօնտը դէպի բուրժուազիան մի այլ մօմենտի, երբ նրա առաջ ծառանում է շահագործուող կատեգօրիան՝ իր կենսական պահանջներով։ Այդպիսի դէպքերում իդէօլոգիական հաւատարմութիւնը հասցնում է մինչև լակէյական խոնարհութեան աստիճանը։

Սակայն միայն կովկասահայ բուրժուազիան չէ իր պրօֆէսիօնալ ինտելիգենցիայով, որի կրաւորական դերը փախստականների գործում արժանի էր բացասական քննադատութեան։ Ինչ արին կովկասահայ ընկերութիւնները՝ իրանց շուրջ խմբած և ղեկավարութիւնը ստանձնած հասարակական ինտելիգենցիայով։ Ինչ արին ամենից առաջ Կովկ. Հայոց Բար. Ընկերութիւնը, Թիֆլիսի Հայ Կնոջ. Կոմիտէն և նպաստամատոյցը։ Ունեն նրանք ակտիւ ծառայութեան և շօշափելի արդիւնքների այն խոշոր պլիւսը, այն մեծ հասարակական երախտիքը, որպէս դրական գնահատութեան. լուսաւոր էջ գրաւելու արժանի լինեն նրանք փախստականների հարցում»։

Բուռն զայրոյթով լի իր դիտողութիւնները Ե. Իշխանեան ամփոփում է՝

«Հայ հասարակական կոլլեկտիվի լայն շերտերի անգիտակցութիւն, գործի գլուխ անցած մարմինների անձեռնհասութիւն և անկազմակերպութիւն հայ ղրամատէրը բուրժուազիայի անտարբերութիւն ու կրաւորականութիւն, հայ ընկերութիւնների և «ուժեղ բազկով» օժտուած հայ կազմակերպութեան անփութութիւն ու ապիկարութիւն, և ուրիշ մի շարք հանգամանքներ, որոնց մասին խօսելու տեղը և մանաւանդ ժամանակը չէ այժմ։

Ահա այդպէս դիմաւորեց ռուսահայութիւնը Թիւրքահայ փախստականների գաղթականական հեղեղատին»։

ԱՐԻԵՍ

Կազմուել է հայ նկարիչների ընկերութիւն։

— Իսկ հայ ղրամատիկ. դերասանակ. ընկ. շարունակում է տալ իր փայլուն ներկայացումները Արտիստիկ. ընկ. շքեղ թատրոնում, ուր բացակայում է Թիֆլիսի հայութիւնը և գերազանցօրէն աչքի է ընկնում իր ներկայութեամբ զաւառացի հասարակութիւնը. Շաբաթական գէթ մի անգամ չը կարողանալ մի քանի օթեակ և նոյնքան բազկաթոռ առաջին կարգերում լցնել այդ այնպիսի արատ է, որ որակել իսկ ամչում ենք։

— Այս հոկտեմբերին թևակոխեց իր գոյութեան 10-ամեակը Թիֆ. Երաժշտ. Կրթութիւն տարածող ընկերութիւնը, որ ծնունդ առաւ Գրական-Գեղագիտական Սալոնին կից և իր կայտառ կենսունակ մանկութիւնը անցկացրեց այնտեղ։ Սակայն անհատական անձնական մարդկային եսը այդ ընկ. հիմնադիր և ոգի երաժշտագէտ Ա. Պրիվետերային (խտալացի) մի կողմ շպրտեց, առաւ այդ ընկ. դեկը իր ձեռքը մինչև որ հասցրաւ հրապարակական անանկութեան և կործանման։ Այժմ սրտացաւ և գործին նւիրուած պ. Ա. Պրիվետերա իր յօշոտած, հոգեվարք այդ ընկերութեան դեկը իր ձեռքն առաւ, նորից շուրջը ժողովեց ցաքուցրիւ անդամներին և օգոստոսի 10-ին հանդիսով վերարացեց այդ ընկերութիւնը և նրա երաժշտական ուսումնարանը, ուր դասաւանդելու հրաւիրուած են և լաւ ոյժեր։ Այդ հանդէսին մենք ուղարկեցինք հետևեալ հեռագիրը՝

Երաժշտ. Կրթութեան Տարածող Թիֆ. Ընկերութեան.

Ազրիւր, Տարագ հանդէսներ և Գրական-Գեղագիտական Սալօնր ջերմագինս ողջունում են երաժշտ. Կրթութեան տարածող ընկ. վերածնունդր և խորապէս համոզուած են, որ ժողովրդական երաժշտ. դպրոցը չնորհիւ արուեստին անկեղծօրէն նւիրուած նոր կոմիտէի, դեկավարների և դասատուների շատ մօտ ապագայում կը գրաւէ ամենքի սէրն ու գնահատը։

Տ. Նազարեան.

Ահա այս ընկերութիւնը ներ-

կայ հոկտ. 4-ին Թիֆ. Արտիստիկ. Ընկ. կոնցերտային մեծ սրահում տուաւ իր առաջին կոնցերտը, հրապարակ հանելով իր դպրոցի դասատու դաշնակահար օր. Բերտա Բուրշտէյնին։ Ամբողջ կօնցերտը՝ Բէթհովէնն, Շոպէնն, Շուման, Դօնանի, Ռախմանինով, Լիստ նուագեց շնորհալի դաշնակարուհին, երևան հանելով լաւ, կատարելագործուած տեխնիկա, ըմբռնումն իւրաքանչիւր հեղինակի ոգին ու թռիչքը։ Հոծ բազմութիւնը վարձատրեց երիտասարդ արուեստագէտուհուն բուռն սիրալիր ցոյցերով, մատուցանելով ջերմ ծափեր և թարմ ծաղիկներով լի կողովներ ու ծաղկափնջեր։

Հոկտ. 24-ին այս ընկ. տաղու է նոյն տեղը իր երկրորդ կոնցերտը՝ երևան հանելով իր միւս դաշնակարուհի Վ. Մատուպնիցկային, մասնակցութեամբ իտալուհի երգչուհի Սպանիօլու և ջութակահար Գ. Տիզենհաուզի։

ՔՐՈՆԻԿՈՆ

—Պատերազմի արհաւիրքն ու յորձանքը հասնում է մինչև հեռաւոր Թիֆլիսը։ Սարսափելի թանգութիւն է ամեն ինչ։ Քաղաքումս չը կայ մանր դրամ և պետական գանձարանը, մինչև 50 և 25, 15 կ. թղթադրամ պատրաստելը, մանր դրամի փոխարէն ընդունում է պօստատյին մարկաններ։ Պատերազմի սկզբից ֆրանսիական իւրաքանչիւր քաղաք գործածութեան մէջ դրաւ 50 սանտիմանոց թղթադրամներ, իսկ Ռուսաստանը մի տարի յետոյ է միայն անհրաժեշտ գտնում այդ տեսակ դրամի գործադրութիւնը։ Այսպէս դանդաղ և բոլոր միւս առօրեայ պահանջների շուրջ։

ՄԵՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

—Սփոփանք, որի պատճէնը ղետեղած է Տարազի ներկայ №-ի առաջին երեսում։

Սփոփող հրեշտակն իսկ անզօր է պաղարիւն բաց երեսով նայել խորշամած սգաւոր Մայր Հայուհուն, որի ծնկներին յօշոտուած, կմախք որբիկն է մնքանմնքան այլանդակ ընկած, և կեղեցին կիսաւեր, ագռաւների շարանը գլխին... Եւ սփոփող հրեշտակը իր հեղեղ արտասուքը չերևացնելու համար ձեռքով երեսն է ծածկել, Սև է ամեն ինչ, բացի դիակ մանկան կմախքը և սփոփող հրեշտակը։ Եւ հաւատանք, որ տակուն Մայր Հայուհու աղէկատուր բողոքը, սոսկամահ կմախք անմեղ մանուկների ճիչը ճերմակ-պայծառ հրեշտակների սփոփանքը նորից չէն ու դալար կանեն Մայր Հայաստանը։

Առաջին մասնաւոր հիւանդանոց

ԲԺՇԿԱՊ. Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնուած 1880 թ.

(Գուկիա, Վլօռնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից, «606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Ս. Ն. Նաւասարդեան — 11—12 ժ. վիրաբուժութեան, վէնէրական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Ռ. Դ. Աղասարեան 9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։

Մ. Մ. Բենիամօվիչ — 11—12 ժ.. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։

Ա. Պ. Կարապետեան — 12—1 ժ, երեք. հինդշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։

Նիկ. Թժիկ Տէր-Դաւթեան — 12-1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Մ. Բենիամօվիչ 6—7 ժ.

Վճարը 50 կ. Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՕՐ. ՄԱՐԳԱՐԻՏ ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

որ ուսանել է ֆրանսերէն լեզուն Պարիզում տալիս է ֆրանսերէնի դասեր։

Հասցէն՝ *Бебутовская 60.*

(3—1)

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶԻՒ

հմուտ, ծանօթ և երկար տարիներ վաճառականական հիմնարկութիւններում ծառայած իբրև վաճառ-թղթակից, ժամանակաւորապէս, հարկադրուած, Թիֆլիս գալով արտասահմանից, որտեղում է պատշաճ պաշտօն զբաղեցնում, կամ ֆրանսերէնի դասեր ընտանիքներում ամենահամեստ

պայմաններով։

Հասցէն՝ Տարազի խմբագրութիւն

(3—3)

ԼՕՅՍ ՏԵՍԱՆ

ՊՕՍՏԿԱՐՏԵՐ

Ժամանակակից պատերազմը
կարիկատուրների մէջ

1 *սերիան 10 հատ զանազան*

— *տեսակ պօստկարտ* —

ՆԿԱՐՆԵՐ ՄԻՇԵԼԻ

ՍԵՐԻԱՆ 50 ԿՈՊ.

Դիմել՝ Тифлис
БЮРО ПЕЧАТИ
Головин. пр., 41.

(5—3)

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑԻՆԵՐԻՆ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆԸ

կիրակի, օգոստ. 9-ից, Միքայէլեան պրօսպեկտի վրայ, № 1

հանդուցեալ Համլակ Նազարեանի ժառանգների այգում, Մուտայլոի դիմաց, բացել է

1000 հայ փախստականների համար

ցերեկւայ ապաստարան

այժմս առաւօտեան ժամ 8-ից մինչև երեկոյեան ժամը 5-ը

Այդ 1000 հոգուն մատակարարում են առաւօտ և երեկոյ չ[ա]հացով, կէսօրին ճաշ։ Ամբողջ օրը ստեւերախիտ ընդարձակ [ա]գին այդ 1000 հոգու տրամադրութեան տակ, որոնց տուում [է] մուտքի անձնական տոմսակ՝ կտրոններով. իւրաքանչիւր օր, [ա]ռաւօտ և երեկոյ չայ ու կէսօրին ճաշ ստանալու և այգին մ[ու]նելու համար։ Ապաստարանը կը մնայ բաց այնքան շարժի[ն], քան հայ գիտակցութիւնն ու պարտաճանաչութիւնը կարող կը [լի]նեն պահպանել սրա գոյութիւնը։ Սկզբնական ծախսերի հա[մա]«Ազբիւրի» և «Տարազի» խմբագրութիւնը նուիրաբերել է 2[0]ՕՐԻՆԱԿ Վաապուրականի Արծիւ հրիմեան (Հայոց Հայրիկը 0[ր]կանում, ֆօտօ-գրաւիւր հատը 1 ր. 50 կ.) և Անվեհեր երկ[ա]Պատրիարի (Վեհափառ Իզմիրլեանը Սանահնում 18 գոյնով [ի]մօ, գինը 3 ր.) ընտիր պատկերները, դումար 4500 բուր.։ [Այ]պատկերները գնողների անուանացուցակը կը տպագրի կատ[ա]ւած ելևմուտքի ընդհանուր հաշւի հետ առանձին պատկերազ[ա]հրատարակութեան մէջ, որ կը վաճառւի դարձ[եալ] Մայր Հայաստանի փախստականների օգտին։ Յարգանօք հ[այ]իւրում են հայութեան բոլոր խաւերը զարդարելով իրանց բ[ա]կարանները Մայր Հայաստանի ազատութեան համար մարտ[ո]վեհափառ ռահվիրանների այս պատկերներով՝ հնարաւորութի[ւն] տալ ամրոցելու մեր եղբայրակիցների վիշտը։ Պատկերները [վ]ճառւում են «Մշակի», «Հորիզոնի», «Ազբիւր-Տարազի» խմբ[ա]գրութիւններում. դրսի քաղաքներից երկու պատկերների գ[ի]ճանապարհածախսով 5 ր.։ Վերադիր և ապահով պատուէր [ա]ընդունւում։ Դիմել՝ Тифлис, Бюро Печати Голов. пр. 41

ԻՏԱԼԱԿԱՆ ՊՐՕՖԵՍՕՐ ԲՐՕՁՈՒ

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆԻՆ

կից, վերսկսել է ուսումը։ Նորերի ընդունելութիւնը շարունակւում է։ Հարիւրաւոր աշակերտ-աշակերտուհիները, որոնցից շատ-շատերը այժմ մի-մի աստղ են նկատւում մեր երկրից էլ դուրս բեմերի վրայ, կենդանի ապացոյց են պրօֆեսօր Բրօձու դասաւանդութեան, բարեխիղճ վարժման և այն մեծ հմտութեան, որ անսկրկայ տարիներից ի վեր նա վաստակել է իր շրջանում։ Ձայների մշակումը, յղկելը, բեմական արուեստի մէջ պահանջւող միմիկը, շարժւածքը կրթում է նշանաւոր արտիստը արուեստի ամենանուրբ պահանջի համեմատ, ոչնչացնելով սկսնակի մէջ շաբլօնն ու նմանողութիւնը, տալով իւրաքանչիւրին իր ձայնի ինքնուրոյնութիւնը՝ համաձայն աշակերտի դրական ունեցած ձայների։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԵՒ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

Պրօֆեսօր Բրօջի աւանդում է երգեցողութիւն Կայսերական Թիւմ. Երաժշտական Ուսումնարանում, միւս օրերը իր յատուկ Երաժշտական Կուրսերում, Գրական-Գեղագիտական Սալօնին կից։

(2—5)

Дозволено воен. цензурой 1915 г. Тифлис.

Թիֆլիս, տպարան Ն. Աղաճեան Պօլից. 7.